23 ՄԱՐՏ 2011 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 50(4669)

# Ազգ

Azg

ISSN: 1829-1651

## Օբաման՝ կոալիցիային աջակցելու իր որոշման մասին

ԱՄՆ-ի նախագահ **Բարաք Օբաման** Լիբիայում ռազմական գործողություն իրականացնող կոալիցիային աջակցելու վերաբերյալ իր որոշման մասին պաշտոնապես նամակով տեղեկացրել է Կոնգրեսին՝ նշելով, որ իր հրամանն օրինական է, համապատասխան ՄԱԿ անվտանգության խորհրդի բանաձեւին: Նամակում նա նաեւ մանրամասներ է հայտնում գործողությունների մասին. «Իմ հրամանը համապատասխանում է Միացյալ Նահանգների ազգային անվտանգությանը եւ արտաքին քաղաքականությանը, արտաքին քաղաքականություն վարելու իմ լիազորություններին, ինչպես նաեւ գերագույն հրամանատարի եւ կառավարության ղեկավարի իմ արտոնություններին», ասված է նամակում:

# Հայաստանում արաբական խռովության նախադրյալների հայտնաբերումը դեռեւս ցանկատեսություն է

## *Բայց որ ժողովրդական զանգվածների անխնա կողոպտման պայմաններում ցանկատեսությունը հաճախ իրողություն է դառնում, ակնհայտ է*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Թունիսում ծայր առած եւ համաժողովրդական խռովության վերածած հակակառավարական ցույցերը դեռ տարածում չէին գտել Հյուսիսային Աֆրիկայի, Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներում, արեւմտյան փորձագետները Հարավային Կովկասում դրանց ծավալումը համարում էին հավանական, իսկ աշխարհի առաջնակարգ լրատվամիջոցները, ելնելով անաչառության սկզբունքից, հետեւողականորեն թմբկահարում էին Արեւմուտքի ցանկատեսության արդյունքը հանդիսացող այս կարծիքը:

Թերեւս այդ առումով պատահական չէր քաղաքական ընդդիմության միաժամանակյա ակտիվացումը ինչպես Հայաստանում, այնպես էլ Ադրբեջանում: Սա նշանակում է, որ Արեւմուտքը, բացի համաժողովրդական խռովության ակնկալիքներից, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հավասարության նշան դնելու հերթական փորձեր է անում, իսկ ընդդիմությունը երկուստեք ակտիվանալով՝ նախադրյալներ է ստեղծում նշված փորձերի համար:

Մինչդեռ Հարավային Կովկասն արաբական աշխարհից, Ադրբեջանն էլ՝ հարավկովկասյան մյուս հանրապետություններից էապես տարբերվում են: Ի՞նչ առումով, այն, որ արաբական անխտիր բոլոր խռովություններում ակնհայտ է իսլամական շարժումների ազդեցիկ դերակատարությունը, իսկ Ադրբեջանում իսլամականները որեւէ ազդեցություն չունեն: Այլապես, Իլհամ Ալիեւի իշխանություններին չէր հաջողվի արգելել երիտասարդների հաճախումը մզկիթ, ոչ էլ նրանք կարող էին ուսումնական հաստատություններում գլխաշորն արգելել կամ ստիպել հավատացյալ ուսանողներին սափրել մորուքը:

Ի տարբերություն Հայաստանի, Ադրբեջանում, բացի Բաքվից, Կիրովաբադը, Սաբիրաբադը, Շիրվանն ու մյուս շրջանները՝ գյուղերով հանդերձ, վաղուց արդեն ընդվզումների թատերաբեմ էին դարձել, եւ Իլհամի վարչակարգին ոչ մի կերպ չէր հաջողվում ոստիկանական ամենաբիրտ միջոցներով կարգուկանոնի հաստատումը:

Այլ կերպ, անկախ Թունիսի օրինակից, Ադրբեջանում առկա էին հակակառավարական խռովության անհաժեշտ բոլոր նախադրյալները: Մնում էր այնտեղ կազմակերպել շրջաններում տարերայնորեն ծավալվող ընդվզումները, ապահովել քաղաքական ընդդիմության մասնակցությունն ու Բաքուն դարձնել դրանց կառավարման կենտրոնը:

Հենց այդ նպատակով էլ մարտի 11-ը Ադրբեջանի Ազգային ճակատ կուսակցությանը հարող երիտասարդության նախաձեռնությամբ հռչակվեց «Համաժողովրդական մեծ ցասումի օր», մարտի 12-ին մուսաֆաթները, իսկ մարտի 15-ին նախագահի նախկին թեկնածու Հաֆեզ Հաճիեւը Բաքվում հանրահավաք նշանակեցին:

Ալիեւի վարչակազմը, ինչպես մարտի 16-ի համարում նշել էր «**Ազգը**», բիրտ ուժի եւ ձերբակալությունների միջոցով կանխեց հանրահավաքների վերածումը համընդհանուր խռովության: Սակայն դա, ինչպես նաեւ Նովրուզի տոնակատարությունները, չխանգարեցին, որ Բաքվում շարունակվեն ցույցերը, մերձակա գյուղերը սատարեն ցուցարարներին, իսկ Սաբիրաբադի եւ Սաաթլու շրջաններում կազմակերպվեն նոր ցույցեր:

Ավելին, Ադրբեջանի Ազգային ճակատ կուսակցությունն առաջիկա հանրահավաքը Բաքվում ապրիլի 2-ին կազմակերպելու որոշում ընդունեց, եւ այդ հարցը կուսակցության նախագահ Ալի Քերիմլու հայտարարությունից հետո մտավ այլընտրանքային խորհրդարանի օրակարգ:

*Տես էջ 2*

ԵՎՐՈՊԱ

## Հայաստանը Ժնեւի գրքի միջազգային տոնավաճառի պատվո հյուր

**Ինչպես մարտի 17-ին իրազեկել է շվեյցարական հեռուստատեսությունը՝ SF-ը, ապրիլի 29-ից մայիսի 3-ը Palexpo-ում 25-րդ անգամ անցկացվելու է Ժնեւի գրքի միջազգային տոնավաճառը (Salon international du livre): Պատվո հյուրերն են Հայաստանը եւ մշակույթի դաշնային նախարարությունը: Տոնավաճառում ներկայացվող հատուկ ցուցահանդեսը նվիրվում է Ազաս որմնադիրների արվեստին: Ցուցադրության են ներկայացվելու առօրյա կենցաղային իրեր, ձեռագրեր, ծիսական պարագաներ: Շվեյցարիայի տոնավաճառների շարքում կարեւորագույն տեղ զբաղեցնող գրքի միջազգային հիշյալ տոնավաճառը նպատակ ունի աղանդի համարում ունեցող բազմածալ գաղտնի այդ հասարակության սովորույթներն ու ծեսերը լուսաբանել, հաղորդում է SF-ը:**

## Այվազովսկու ցուցահանդես Վիեննայում

**Ավստրիական մամուլի հաղորդմամբ, Վիեննայում՝ Բանկ Ավստրիայի Քունսթֆորումում բացվել եւ մինչեւ հուլիսի 7-ը հանրության ուշադրությանն է ներկայացվում «Այվազովսկի. Ծովի նկարիչը» ցուցահանդեսը, ուր ամփոփված են հեղինակի՝ Ռուսաստանի եւ Ուկրաինայի տարբեր հավաքածուներից ձեռք բերված մոտ 6000 ստեղծագործություն:**

**«19-րդ դարում իր հայրենիքում ամենասիրված նկարիչը, ում Ռուսաստանում եւ Ուկրաինայում նույնիսկ ամեն երեխա է ճանաչում, Արեւմտյան Եվրոպայում շատ քիչ է հայտնի», ափսոսանքով նկատել է Քունսթֆորումի նախագահ Ինգրիդ Բրուգգերը:**

**Ցուցադրությունը բաց է ամեն օր, ժամը 10-19, ուրբաթ՝ ժ.10-21-ը:**

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

## Հայաստանն ու Արցախը՝ «LA Times Travel & Adventure Show»-ում

Մարտի 19-20-ին Լոս Անջելեսում Հայաստանի գլխավոր հյուպատոսության նախաձեռնությամբ Հայաստանն ու Արցախը երկրորդ անգամ մասնակցել են ԱՄՆ արեւմտյան ափի խոշորագույն զբոսաշրջային միջոցառմանը՝ «LA Times Travel & Adventure Show»-ին:

Ըստ ԱԳՆ-ի հաղորդագրության, տարբեր երկրներից ժամանած հարյուրավոր կազմակերպությունների ներկայացուցիչները LA Convention Center-ում ներկայացրել են աշխարհի տարբեր անկյուններում գտնվող՝ հանգստի ու ժամփորդության լավագույն հանգստավայրերը: Երկու օրերի ընթացքում ցուցահանդեսը դիտելու են գնացել տասնյակհազարավոր այցելուներ:



Հայաստանն ու Արցախը ներկայացել են միասնական տաղավարով: Հայկական տաղավարի մոտ այցելուների հարցերին պատասխանել են Հայաստանից ու Լեռնային Ղարաբաղից ժամանած, նաեւ տեղի հայկական զբոսաշրջային ընկերությունների ներկայացուցիչները: Այցելուներին բաժանվել են տեղեկատվական գրքույկներ:

LA Times թերթի հրատարակիչ եւ գործադիր տնօրեն **Էդի Հարթենշթայնը** նշել է, որ, ինչպես անցած տարի, այս անգամ եւս հայկական տաղավարն աչքի է ընկնում գեղեցիկ նկարներով ու նյութերի բազմազանությամբ:

Ա. Հ.

## Համբուրգում ձերբակալել են հայկական խմբավորման 3 անդամների

**Ինչպես 2010-ի հունվարին իրազեկել էինք մեր ընթերցողներին, նույն ամսվա 11-ին Համբուրգի Լոհբրյուգգեի ժամանցի վայր հանդիսացող սպորտային կենտրոններից մեկում վեճ էր սկսվել արական սեռի 17 ներկայացուցիչների միջեւ, որն ավարտվել էր կրակոցներով: Գերմանաբնակ երկու խմբավորումները, որոնց ներկայացուցիչները ծագումով Հայաստանից են, թշնամացած հարաբերություններ են ունեցել: Առճակատումից հրազենից վիրավորվել էր Հյուսիս-Հռենոս-Վեստֆալիա երկրամասից ժամանած խմբավորման անդամներից 39-ամյա Վաչագան Վ.-ն, վերջինիս տեղափոխել էին հիվանդանոց: Նրա վիճակն այժմ լավ է, գտնվում է տանը: Սպորտային կենտրոնի անվտանգության պահպանության տեսանկարահանող համակարգը միացված էր եղել, ժապավենը հանձնվել էր քննության: Երկուշաբթի՝ մարտի 21-ին, Համբուրգի լրատվամիջոցները հաղորդեցին, թե ժապավենի եւ վկաների օգնությամբ մարտի 18-ին գիշերով արդեն ձերբակալել են քաղաքի տարբեր հատվածներում բնակվող երկու խմբավորումների 3 գլխավոր դերակատարներին՝ 27, 36, 23 տարեկան տղամարդկանց, որոնց տներում տարատեսակ զինամթերք էլ են գտել, իսկ 36-ամյա կասկածյալի բարձի կողքին լիցքավորված ատրճանակ է եղել: Մյուս անդամներին փնտրում են: Ըստ իրավապահ մարմինների, վիճաբանությունը ծագել է դրամական փոխառած պահանջների պատճառով: Մյունստերաբնակ հայերից մեկի հանցագործություններին տեղի ոստիկանությունն արդեն տեղյակ էր:**

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

## Հասարակությունն օտարված է եւ ֆիզիկապես թուլացած

«Հասարակությունն անոմիկ է եւ օտարված: Բնակչությունը խանդավառությամբ դիմավորեց անկախությունը, հետո հիասթափվեց նախ ժողովրդավարությունից, հետո՝ իշխանությունից: Իշխանությունները մի ճանապարհով են գնում, հասարակությունը՝ մեկ այլ: Դրա շարունակությունը բերում է ճգնաժամի խորացման: Այս ամենը ձեւավորում է որոշակի մթնոլորտ: Այժմ ժողովրդին դժվար է համոզել մի հերոսով: Այսօր հերոս էլ չունենք»: Հասարակության վերաբերյալ գնահատականը սոցիոլոգ **Գեւորգ Պողոսյանինն** է: Նրա մեկնաբանությամբ՝ ժողովուրդը սպասում է, սպասում է իշխանությունների կտրուկ գործելակերպին: «Վերջին 6 տարվա ընթացքում գրանցում ենք նույն տվյալները. բնակչության համար առաջնային խնդիր է սոցիալ-տնտեսականը: Փոփոխությունների ակնկալիքները խորքային են: Առայժմ այդ փոփոխությունները հանրությունը չի զգում: Արտագաղթի պոտենցիալ քանակը մեծանում է: Սա մտահոգիչ հանգամանք է իշխանության եւ ընդդիմության համար», նշում է Պողոսյանը ՄԱԱ-ում:

Նրա գնահատմամբ՝ նախագահ Սերժ Սարգսյանի սոցիալ-տնտեսական խնդիրներին առավելագույն ուշադրություն դարձնելու ու հստակ պահանջներ ներկայացնելու, ընդդիմադիր տարբեր ուժերի ակտիվացման հիմքում արաբական աշխարհում տեղի ունեցող հեղափոխություններն են: Սոցիոլոգը համոզված է՝ հեղափոխությունը Հայաստան չի հասնի: Դրա համար կան մի քանի գործոններ: Հայերն ավելի խոհեմ են ու տրամաբանական: Սթափեցնող մտքերը շատ են. հասարակությունը հասկանում է, որ ներքաղաքական բախումը կարող է հանգեցնել իրավիճակի լարման շփման գծում: Հեղափոխություն անցկացնելու համար Հայաստանն այդքան ռեսուրս չունի: Այն կկատարվի միայն արտաքին միջամտությամբ: Սակայն առայժմ, միջազգային վերլուծաբանների կանխատեսումներով, Հայաստանին հեղափոխություն չի սպառնում: Հեղափոխությունը չի սպառնում նաեւ այն պատճառով, որ հասարակությունը ֆիզիկապես թուլացած է: Հասարակության հիմնական հուզող թեման կենսամակարդակի բարձրացումն է, սոցիալ-տնտեսական խնդիրների լուծումը: Հենց այդ խնդիրների չկարգավորման պատճառով երկրում շարունակվում է արտագաղթը: Թեպետ հարցման արդյունքում շատերն են բացասական վերաբերվում արտագաղթին, սակայն ճամփորդները հավաքում են ու մեկնում ԱՄՆ, Ռուսաստան, որովհետեւ այստեղ չեն կարողանում աշխատանք գտնել, ընտանիք պահել: Պողոսյանը փաստում է, որ եթե այսպես շարունակվի, 10 տարի անց բնակչության թիվը չի գերազանցի 1.5 մլն-ը: Կառաջանա ավելի բարդ հարց՝ երկրի լինել-չլինելու հարցը: Սոցիոլոգը համոզված է. երկրում 20 տարի անց հայերի թիվը չի գերազանցի 40 տոկոսը: Սա լուրջ հարց է, որը պետք է մտահոգի իշխանություններին:

«**Ազգ**»-ի դիտարկմանը, որ Ռուսաստանի իշխանությունների նախաձեռնությամբ իրականացվում է «Հայրենակիցներ» ծրագիրը, ինչի հետեւանքով հարյուրավոր հայեր մեկնում են Ռուսաստան՝ մշտական բնակության, Պողոսյանն ասաց, որ հարցումներով պարզել են, որ ծրագրով հետաքրքրվողները շատ են:

«Չենք կարող ասել, թե քանիսն են արդեն գնացել, սակայն հետաքրքրությունն այդ ծրագրի նկատմամբ հսկայական է ու վտանգավոր: Սա մտահոգիչ է երեւույթ է: Այս հարցին կարող են միջամտել իշխանությունները ու ամենաբարձր մակարդակով հարեւան Ռուսաստանին դիմել, որ «Հայրենակիցներ» նախագիծը Հայաստանում ներկայացվի 10 տարի անց, որովհետեւ այժմ երկիրը դեմոգրաֆիկ լուրջ խնդիրներ ունի»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

# Երկու նիհար նաղաստակ

Երկու նիհար նաղաստակի փոխարեն չի լինի՞ մեկ թմբլիկի հետեւից ընկնենք. այս միտքը պատգամավոր **Էռնեստ Սողոմոնյանինն** է, ասվել է երեկ խորհրդարանում եւ վերաբերում է կոալիցիոն եւ այլընտրանքային ընտրական նախագծերի ինչ-որ դրույթներ համադրելուն: Երեկ Ազգային ժողովն ավարտեց կոալիցիոն ընտրական օրենսգրքի նախագծի քննարկումն ու անցավ ՀՅԴ այլընտրանքային նախագծի քննարկմանը: Ներկայացնելով նախագիծը՝ ՀՅԴ խմբակցության պատգամավոր **Արծվիկ Մինասյանը** նշեց այն առաջարկները, որոնք նրա կարծիքով պետք է ապահովեն նորմալ ընտրություններ Հայաստանում՝ ընտրությունների նախնական արդյունքների հրապարակում ընտրություններից երկու ժամ հետո, որը թույլ չի տա վերջնական արդյունքների ուռճացում եւ ձեւախեղում, քվեարկողների ցուցակի հրապարակում ընտրություններից հետո, ընտրական փաստաթղթերի արխիվացում, քվեարկության եւ ձայները հաշվելու գործընթացի ընթացքի տեսաձայնագրում, ընտրական հանձնաժողովների՝ ընդդիմություն-իշխանություն 50:50 կազմություն, ընթացք դեպի համամասնական խորհրդարան, կանանց 30 տոկոսանոց համամասնություն եւ այլն: Նախագծում սեռային հավասարակշռությունն ապահովված է, 100-տոկոսանոց համամասնական ընտրակարգի կողմնակից ՀՅԴ-ն դեռ առաջարկում է ընդամենը փոխել հարաբերակցությունը հօգուտ համամասնականի:

Կոալիցիոն նախագիծը մեկ օր առաջ ներկայացրած **Դավիթ Հարությունյանը** հետաքրքրվեց, թե ՀՅԴ մոդելի ո՞ր կետն է առավել կարեւոր, որտե՞ղ կարելի է կոմպրոմիս տեսնել (հետագայում որեւէ կետ համադրելը նկատի ուներ): Ըստ Ա. Մինասյանի՝ բոլոր կետերն էլ նույն՝ նորմալ ընտրություն կազմակերպելու նպատակն են հետապնդում: Դ. Հարությունյանը խախտումները կանխարգելող գործիքակազմ չէր նկատում, Ա. Մինասյանը բոլոր առաջարկներն էր այդպիսին համարում: Որպես այլընտրանքային նախագիծ ԱԺ պետաիրավական հանձնաժողովի դրական եզրակացությամբ էր ՀՅԴ նախագիծը մտել ԱԺ օրակարգ, սակայն այդ հանձնաժողովի անդամ **Արա Սիմոնյանը**, ողջունելով հանդերձ՝ նկատեց, թե համամասնական ընտրակարգը համահունչ չէ պրեզիդենտական կառավարման այսօրվա ձեւին, իսկ ԱԺ 90-41 կազմությունը քաղաքական կոմպրոմիսի արդյունքում է ձեւավորվել եւ մի նախագծով փոխելու չէ: Տեսաձայնագրող սարքը տեխնիկական խնդիրներ կարող է բերել, որի համար պատասխանատուն հայտնի չէ, ցուցակների հրապարակումը կարող է անձի իրավունքների խախտման բերել: Սկանավորումը՝ փաստաթղթերի արխիվացման համար, մարդկանց տոտալ հսկողության տակ պահելը ընտրությունների նկատմամբ բարեհամբույր վերաբերմունք չի թույլ տա, փաստաթղթերի արխիվացումը կարող է բերել գաղտնիության դրույթի խախտմանը՝ այլ նպատակներով կարող է օգտագործվել: Ընտրագովազդի՝ հեռուստատեսության եւ ռադիոյի մոնիտորինգի ՀՅԴ առաջարկը կոալիցիոն նախագծում եւս կա, սա կրկնվում է, բայց եւ, ըստ Ա. Սիմոնյանի, ՀՅԴ նախագծից դրույթներ կարելի է վերցնել, բայց եւ փակուղային դրույթներ եւս կան այնտեղ:

Հարակից զեկուցող, արդարադատության նախարար **Հրայր Թովմասյանը** նույնպես նշեց, թե կառավարությունը պաշտպանում է այսօրվա համամասնությունները: Հանձնաժողովների կուսակցական հավասարակշռման մոդելով ձեւավորումը բնավ էլ վստահություն չի ավելացնում ըստ նրա՝ տեղերը սրանց-նրանց տալու երեւույթները կան դեռ: Հանձնաժողովի անդամներին հետ կանչելու հնարավորությունը նշանակելուց հետո հանձնաժողովի անդամի հենց անկախությունն է բացառում: Մի խոսքով՝ կառավարությունը դեմ է այս նախագծին: «Ինչո՞ւ կառավարությունը ընտրացուցակների հրապարակմանը դեմ էր, միգուցե որ ժողովուրդը կիմանա՞, թե 58 հազար մեռած թոշակառուներ են քվեարկել՝ 58 հազար մեռած թոշակառու թոշակ են ստացել, նախորդ օրն էին այստեղ ասում, տարիներով թոշակ ստացած մեռած հոգիները, վստահ եմ, մասնակցել էին նաեւ ընտրություններին», ասաց-հետաքրքրվեց ՀՅԴ խմբակցության ղեկավար **Վահան Հովհաննիսյանը** Հ. Թովմասյանին: Գաղտնիության չպահպանումը խնդիր չէ, նկատեց Թովմասյանը, ցուցակներ հրապարակելն է խնդիր ըստ եվրոպական չափանիշների: Վ. Հովհաննիսյանն ու Հ. Թովմասյանը մի քիչ «նյարդացած» շփվեցին, բովանդակությունն այն էր, որ պատգամավորը ցանկացած հարց կարող է տալ, իսկ կառավարության անդամը չպետք է իրոնիայով պատասխանի: Երազում ենք, որ պարտված քաղաքական թիմն ու նախագահի թեկնածուն կշնորհավորեն հաղթածին՝ եթե նորմալ համամասնությամբ հանձնաժողով չենք ձեւավորում՝ պարտված կուսակցությանն առիթ ենք տալիս, որ պարտվածը դուրս գա փողոց. մոտավորապես այսպես ձեւակերպեց իր միտքը ՀՅԴ-ական **Հրայր Կարապետյանը**, իսկ ՀՀԿ-ական **Ռաֆիկ Պետրոսյանը**, չժխտելով ՀՅԴ նախագծից որոշ դրույթներ վերցնելու տարբերակը՝ առաջնայինը կոալիցիոն ընտրական օրենսգրքի նախագիծը համարեց, թվելով նրա բարեմասնությունները, մեծամասնական կարգը պահպանելն էլ իրավական առումով ճիշտ համարեց այս պահին:

ՀՅԴ նախագծի քննարկումը կավարտվի վաղը եւ պարզ կդառնա՝ այս նախագծից ինչ-որ դրույթներ կոալիցիան որպես կոմպրոմիս առաջարկելո՞ւ է ներառել կոալիցիոն տարբերակում, թե քվեարկությամբ մերժելու է:

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ԻՐԱՎԻՃԱԿ

# Հայաստանում արաբական խռովության նախադրյալների հայտնաբերումը դեռեւս ցանկատեսություն է

*1-ին էջից*

Համենայն դեպս, ադրբեջանական ընդդիմությունն ապրիլի 2-ին Բաքվում հանրահավաք կազմակերպելու նպատակով դիմել է քաղաքապետարան: Մարտի 21-ին, նշելով այս ամենը թուրքական «Դունյա բուլետենի» կայքէջում, Իբրահիմ Ալին «Դրությունը լարված է նաեւ Երեւանում» ենթավերնագրի տակ գրում է. «Ադրբեջանում ընթացող քաղաքական զարգացումներին զուգահեռ ընդդիմությունը Հայաստանում եւս սկսեց փողոց դուրս գալ: Մարտի 17-ի հանրահավաքում մասնակիցները պահանջեցին Սարգսյանի հրաժարականը: Հայկական ընդդիմությունը, ի տարբերություն ադրբեջանականի, անհամեմատ ազդեցիկ է, այդ իսկ պատճառով էլ կարողացավ հանրահավաքում ապահովել հազարավոր մարդկանց մասնակցությունը: Հանրահավաքի ընթացքում Հայ ազգային կոնգրեսի առաջնորդ, նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանն ասաց, որ ներկա պահին երկիրը սոցիալական պայթյունների շեմին է, Միջին Արեւելքում տարածվող համաժողովրդական խռովությունները կարող են կրկնվել Հայաստանում: Ինչպես Ադրբեջանում, այնպես էլ Հայաստանում, իշխանությունների դեմ ժողովրդին միավորող խնդիրների մեջ առաջնայինը սոցիալականն է: Հայաստանյան վերջին դեպքերը սկզբնավորվեցին նախկին արտգործնախարար, «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Րաֆֆի Հովհաննիսյանի Ազատության հրապարակում հայտարարած հացադուլով: Երկու երկրներում էլ զուգահեռաբար ընթացող քաղաքական զարգացումներն առաջիկա թեժ գործողությունների ազդակներն են: Միաժամանակ պահպանվում է համաժողովրդական հնարավոր խռովության քաղաքացիական պատերազմի վերաճելու հավանականությունը, որի մասին վերջերս հաճախ են խոսում: Սակայն այդ դեպքում էլ օրակարգ կմտնի իրադարձություններին ոչ այնքան արեւմտյան տերությունների, որքան Ռուսաստանի ռազմական միջամտության հարցը: Արտահայտվում են նաեւ վերջին տարիներին հատկապես Ադրբեջանում ներքին բախումներ հրահրելու համար Կրեմլի գործադրած ջանքերի մասին»:

Որքան էլ այլասերված քաղաքական համակարգը ժողովրդական զանգվածներին կողոպտելու հնարավորություն տա հայաստանյան իշխանություններին, քաղաքացիական պատերազմի համար Հայաստանում դեռեւս նախադրյալներ չկան:

Ինչ վերաբերում է ցանկատեսությունից բխող մտացածին այդ նախադրյալը ադրբեջանական ընդդիմության համեմատ հայկականի կազմակերպվածությամբ պայմանավորելու դրսեւորումներին, ապա այլասերված քաղաքական համակարգը Հայաստանում ձեւավորել է հենց այդ ընդդիմության առաջնորդ Տեր-Պետրոսյանը: Ավելին՝ պաշտոնավարման տարիներին նա որպես նախագահ ձեռնարկելով Հայաստանի ազգային հարստությունների կողոպուտը, միաժամանակ նախադրյալներ է ստեղծել, որ հաջորդ իշխանություններն էլ ձեռնամուխ լինեն սեփական ժողովրդի կողոպտմանը՝ ընդհուպ ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի ինքնարժեքն այսպես կոչված կայունացնելու կամ օգտագործածի դիմաց նաեւ չօգտագործած բնական գազի, էլեկտրաէներգիայի, ինչու չէ՝ նաեւ ջրի գումարը բնակչությունից գանձելու միջոցով:

Սա նշանակում է, որ Ռոբերտ Քոչարյանն ամրապնդել է Տեր-Պետրոսյանի ձեւավորած քաղաքական այլասերված համակարգը, որը Սերժ Սարգսյանի օրոք շարունակում է անշեղորեն կատարելագործվել: Ահա թե ինչու, հացադուլով ընդդիմադիրների համար, թուրք հեղինակի վկայությամբ, ճանապարհ հարթող Րաֆֆի Հովհաննիսյանին, իշխող կուսակցությունների ղեկավարների հետ փորձում են անտեսել նաեւ ընդդիմության առաջնորդները եւ միահամուռ ուժերով հեգնանքի առարկա են դարձնում ՀՀ նախկին արտգործնախարարի հայրենիքի հանդեպ պահանջած խիղճն ու սերը:

Հայրենիքի հանդեպ խիղճն ու սերը յուրահատուկ են պարկեշտ մարդուն, իսկ նրանք, ովքեր ազգային հարստությունների կողոպուտից հետո սկսել են ամենաայլանդակ դրսեւորումներով կողոպտել սեփական ժողովրդին, ընդամենը հանցագործի հոգեբանություն ունեն: Այլ կերպ, Րաֆֆի Հովհաննիսյանի հացադուլի ցուցադրական անտեսումն ու նրա պահանջների նկատմամբ հեգնանքը ոչ այլ ինչ են, քան սեփական հայրենիքի ու ժողովրդի անխնա կողոպուտից բխող հանցագործի հոգեբանության արտահայտություն, որոնք միաժամանակ այդ հոգեբանությունը գոնե մասամբ ճնշելու միջոց են դառնում:

Որքան էլ արաբական խռովությունների տարածման առումով իրական նախադրյալների բացակայությամբ Հայաստանը տարբերվի Ադրբեջանից, հայրենիքի հանդեպ խիղճն ու սերը իշխանության հետ հավասարապես հեգնանքի առարկա դարձնի ընդդիմությունը, դանակը, մեր երկրում եւս, հետզհետե ոսկորին է հասնում: Ժողովրդական զանգվածների համատարած կողոպուտը եթե նույնիսկ համաժողովրդական խռովության նախադրյալներ չստեղծի, այդ նախադրյալների համար նախապայմաններ անպայման ստեղծելու է:

# Շվեդիայի արտգործնախարարը ապրիլին կլինի Երեւանում

Հայաստանի արտգործնախարար **Էդվարդ Նալբանդյանը** երեկ ընդունել է Հայաստանում Շվեդիայի նորանշանակ դեսպան տիկին **Դիանա Յանսեին** (Diana Janse) (նստավայրը Թբիլիսի) հավատարմագրերի պատճենի հանձնման կապակցությամբ:

Նախարար Նալբանդյանը հաջողություններ է մաղթել դեսպանին նոր առաքելության մեջ եւ հույս հայտնել, որ ինչպես նախորդները, դեսպան Յանսեն իր կարեւոր նպաստը կբերի Հայաստանի եւ Շվեդիայի միջեւ բարեկամական հարաբերությունների ամրապնդմանն ու զարգացմանը: Դեսպան Յանսեն վստահեցրել է, որ կանի առավելագույնը հայ-շվեդական գործակցությունը առավել ընդլայնելու համար:



Նալբանդյանը ողջունել է նաեւ ապրիլի սկզբին Շվեդիայի արտաքին գործերի նախարար Կառլ Բիլդտի Հայաստան կատարելիք այցի օրակարգը:

Զրուցակիցները անդրադարձել են նաեւ Հայաստան-Եվրոմիություն հարաբերությունների զարգացմանը եւ համագործակցության գործող ձեւաչափերի շրջանակներում կատարվող աշխատանքներին:

**Ա. Հ.**

# Մեկնարկեց «Թատրոն-X» հանրապետական փառատոնը

Երեկ Հրաչյա Ղափլանյանի անվան Դրամատիկական թատրոնում հանդիսավորությամբ բացվեց «Թատրոն-X» 4-րդ հանրապետական փառատոնը՝ Հայաստանից եւ ԼՂՀ-ից 31 թատրոնների ու թատերախմբերի մասնակցությամբ: Ազգային թատերական ստեղծագործական միավորումը ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ թատերասերներին մարտի 21-ից մինչեւ ապրիլի 28-ը մայրաքաղաքում եւ մարզերում խոստանում է պարգեւել հետաքրքրական պահեր՝ ծանոթացնելով նաեւ մարզային թատրոնների, թատերախմբերի խաղացանկին: Փառատոնը այս տարի անց է կացվում «Մշակութային միասնություն, բանավեճի փառատոն» կարգախոսի ներքո, եւ ընդունված ձեւաչափի համաձայն, յուրաքանչյուր ներկայացումից հետո տեղի կունենան բաց, հրապարակային քննարկումներ՝ ռեժիսորների, թատերական քննադատների, դերասանների, պրոդյուսերների, լրագրողների եւ հանդիսատեսի մասնակցությամբ: Նշենք, որ այս փառատոնին Շուշիի Նարեկացի արվեստի կենտրոնի թատերախմբից բացի իր մասնակցությունը կբերի նաեւ Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան դրամատիկական թատրոնը: Փառատոնը հրաշալի հնարավորություն է ընձեռում մեկ ամսում ներկայացնել ոչ միայն կայացած թատրոնների ու թատերախմբերի գործունեությունը, այլ նաեւ աջակցում է երիտասարդ ստեղծագործողներին՝ բեմադրիչ, դերասան, նկարիչ, երաժիշտ եւ այլն:

Փառատոնի փակման հանդիսավոր արարողությունը կկայանա ապրիլի 28-ին, Հովհաննես Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնի շենքում եւ հենց այդ ընթացքում էլ փառատոնին լավագույնս ներկայացածներին կհանձնվեն մրցանակներ:

**Ս. ՄԱԿԱՐՅԱՆ**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# «Ազատության ծոմը»՝ քաղաքական համեստ ահազանգ

Արդեն մի շաբաթից ավելի է, ինչ «Ժառանգություն» կուսակցության առաջնորդ Րաֆֆի Հովհաննիսյանը հացադուլ է հայտարարել: Նա նստած է Ազատության հրապարակում, որտեղ 7 օրերի ընթացքում մեր համաքաղաքացիներից նրան այցելել են մոտավորապես 15 հազար հոգի՝ արտահայտելով իրենց զորակցությունն ու աջակցությունը:

Կուսակցական ընկերների ու համակիրների ներկայությամբ երեկ Րաֆֆի Հովհաննիսյանն ասուլիս էր հրավիրել: Նրա խոսքով՝ մեկ-մեկ խրատով, մեկ-մեկ խորհրդով ու դիպուկ ռեպլիկներով մարդիկ ասում են, որ Ազատության հրապարակում հացադուլի մեջ պետք է նստած լիներ ոչ թե Րաֆֆի Հովհաննիսյանն, այլ Հայաստանի իշխանությունը:

Սակայն համաքաղաքացիների ռեպլիկներին պարոն Հովհաննիսյանը համաձայն չէ. «Ազատության հրապարակում նստել եմ ինձ հավատարիմ լինելու համար»: Ապա անդրադառնալով «Ազատության ծոմի» առնչությամբ հնչած տեսակետներին՝ առ այն, թե կուսակցության առաջնորդի հացադուլը քրիստոնեական ծո՞մ է, թե՞ քաղաքացիական հացադուլ, Րաֆֆի Հովհաննիսյանը նշեց, որ ամսի 15-ին ինքը մտել է Ազատության հրապարակ քաղաքացիական, քաղաքական իր սահմանադրական իրավունքն իրացնելու համար, ոչ թե քրիստոնեական որեւէ ծիսակատարության կամ մեծ պահքի շրջանակներում. «Այս ծոմը քաղաքական համեստ ահազանգ է: Բայց քանի որ ե՛ւ իշխանական, ե՛ւ որոշ ընդդիմադիր գործընկերների համար սա դեռ մնում է որպես շահարկման պահ, ապա ուզում ենք ավելի մատչելի ձեւով ներկայացնել, թե բոլորս միասին ինչ ենք ակնկալում»: Ր. Հովհաննիսյանը ներկայացրեց այն 15 կետերը, որոնց մեջ, նրա կարծիքով, ամփոփված են ժողովրդի սպասելիքներն ու ապագան՝ «Իշխանությունը ժողովրդին», «Ո՛չ կուսակցապետությանը», «Ժողովուրդն է երկրի տերը», «Ձայն բազմաց, ձայն Աստծո», «Ազատ հրապարակ, ազատ քաղաքացի, ազատ երկիր», «Ազատ քաղաքացի, անվտանգ պետություն», «Ժողովրդին աշխատանք», «SOS, Հայաստանը հայաթափվում է» եւ այլն: Բոլոր 15 ձեւակերպումները գրված էին պլակատների վրա, որոնք պահել էին նրա շուրջը հավաքված զորակիցները:




Այնուհետեւ «Ժառանգության» առաջնորդը պատասխանեց լրագրողների հարցերին: Դիտարկմանը, թե ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանը մեղադրել է Րաֆֆի Հովհաննիսյանին ցուցադրական ծոմապահության մեջ, վերջինս այսպես պատասխանեց. «Բոլոր դեպքերում, քրիստոնեաբար եմ մոտենում այդ խոսքին: Ես անկեղծաբար ու սիրով առաջին նախագահին մաղթում եմ Աստծո օրհնություն ու երկարատեւ կյանք: Իսկ եթե որեւէ մարդ ինձ կամենում է սատանայի կործանում, դա յուրաքանչյուր մարդու իրավունքն է: Եվ քանի խոսում ենք ստերի, կեղծիքների ու քրիստոնեական վարքի մասին, կարող եմ առաջարկել, որ բոլորս ընթերցենք ու հղում կատարենք Հովհաննես Մանդակունու այն բաժնին, որը խոսում է ոխ պահելու ու վրեժ լուծելու մասին»: Ինչ վերաբերում է ՀԱԿ-ի հետ համագործակցելուն, պարոն Հովհաննիսյանը որեւէ համագործակցության եզրի հնարավորություն տակավին տեսնում է: ՀԱԿ-ին ու Լեւոն Տեր-Պետրոսյանին այսպիսի պատասխան տալուց հետո Րաֆֆի Հովհաննիսյանն անդրադարձավ նաեւ իշխանությանը, որի վերաբերմունքի մեջ որեւէ փոփոխություն դեռեւս չի նկատել. «Ապագան կանխատեսել չեմ կարող, սակայն խիստ անհավանական եմ համարում, որ այս իշխանությունը կկարողանա հանդես գալ քաղաքական ու արտահերթ լուծումներով: Սակայն ես դա չեմ բացառում»:

Ազատության հրապարակում հավաքված համակիրներն «Ազգի» հետ զրույցում ասացին, որ մինչեւ ժողովրդի պահանջների իրագործվելը լինելու են պարոն Հովհաննիսյանի կողքին: 50-ամյա **Հարությունը** նշեց, որ Ր. Հովհաննիսյանի միջոցով կարողացավ ավելի լավ ճանաչել ընդդիմադիր գործիչներին. «Սկսած Լեւոն Տեր-Պետրոսյանից՝ վերջացրած Տիգրան Կարապետյանով»:

Հացադուլը դադարեցնելու մասին պարոն Հովհաննիսյանը որեւէ բան չասաց, ավելի շուտ՝ կրկնեց արդեն ասվածը. «Պետք է շարունակեմ այնքան ժամանակ, որքան իմ մարմինը ների ու Աստված կամք տա»:

Բժիշկներն ամեն օր այցելում են Ր. Հովհաննիսյանին: Նրա առողջությունը դեռ նորմալ վիճակում է:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# «Մենամարտ» Տեր-Պետրոսյանի եւ Րաֆֆու միջեւ

**Լեւոն Տեր-Պետրոսյանը, «Ազատության» հրապարակում հացադուլ անող Րաֆֆի Հովհաննիսյանին չմոտենալու վերաբերյալ մեղադրանքներին պատասխանելով՝ «Հայկական ժամանակ» օրաթերթում արդարացել է, թե դա հակասում է իր քրիստոնեական սկզբունքներին: Իր արդարացումն ամրապնդել է՝ մեջբերելով Հովհան Մանդակունուն, թե՝ սատանան կործանում է թե՛ ծոմապահին, թե՛ նրա պահքը, երբ մարդ ուրիշներից իրեն վեր է դասում ու ցանկանում, որ իր ժուժկալությունը թմբկահարվի այլոց կողմից, եւ մարդիկ տեղյակ դառնան ու հիանան իր տոկունությամբ. «Այդպիսի պահքը ոչ թե մաքրում ու արդարացնում է, այլ պղծում ու կործանում», մեջբերել է Տեր-Պետրոսյանը՝ հավելելով, որ եթե Ր. Հովհաննիսյանը կոնկրետ քաղաքական պահանջներով հացադուլ հայտարարեր, ինքը ոչ միայն կողջուներ, այլեւ լիակատար զորակցություն կհայտներ:**

**Իսկ մենք ավելացնենք, որ մեկ անգամ չէ, որ ականատես ենք եղել, թե ինչպես է Տեր-Պետրոսյանն իրեն բարձր դնում իր շրջապատից եւ բոլոր մյուսներից, եւ դրա համար որքան համապատասխան մեջբերումներ կարելի է անել Աստվածաշնչից՝ փառասերի եւ հպարտի կործանման խոստումներով:**

**Երեկ արդեն Րաֆֆի Հովհաննիսյանը պատասխանեց Տեր-Պետրոսյանին՝ մատնացույց անելով նույն Հովհան Մանդակունու մի ուրիշ գլուխ: «Ոխ պահողների ու վրեժ լուծողների մասին» գլխում նույն Մանդակունին ասում է. «Ոխ պահողների եւ վրեժ լուծողների անօրինությունը եւ չարությունն առավել ահավոր ու սաստիկ ենք տեսնում, քան բոլոր մյուս մեղքերի անօրինությունները, որովհետեւ բոլոր մյուս մեղքերն ու անօրինությունները երբեմն սաստկանում եւ դադարում են, իսկ չարի կողմից հրահրված քինահանությունը, երբ ընկերոջից իրեն ընդդիմացող խոսքեր է լսում՝ բորբոքվում է անօրեն ու նենգ խորհուրդներով: Քինախնդիր ոխապահների մտքում ամեն ժամ առանց հանգչելու բորբոքվում է նախանձի բոցը եւ հանապազ կսկծեցնում նրանց սիրտը: Նրանք հալումաշ են լինում, չարչարվում են իրենց մտքում, ոմանք անգամ այլագունում են իրենց չար խորհուրդների եւ սրտի նենգության պատճառով եւ մարդկանց մեջ շրջում է խորամանկ իժը (ոխակալը): Իժի թույնի նման իր սրտում կրելով նենգությունը՝ նրա սիրտը մշտապես սատանայի օթեւան եւ բնակարան է: Նա լսում է՝ ինչ-որ սատանան է ասում, եւ շուտ կատարում է նրա կամքը, տեսքից մարդու է նման, իսկ վարքով՝ չարաժանիք գազանի, հրապարակներում նստում է իբրեւ մարդ, բայց նրա խորհուրդներում չար դեւի խորամանկություններն են: Մտնում է եկեղեցի իբրեւ քրիստոնյա, բայց նրա աղոթքները պիղծ են առավել, քան պիղծ զոհերը, քանզի ոխ պահողների աղոթքները չեն բարձրանում Աստծո առջեւ, որովհետեւ չարությունը նրանց սրտերում է՝ մշտապես անօրեն նենգություն են խորհում» եւ այլն:**

**Հովհան Մանդակունու մասին դո՛ւ ասացիր:**

Մ. Խ.

# Այսօր օդերեւութաբանության համաշխարհային օրն է

Այսօր օդերեւութաբանության համաշխարհային օրվան նվիրված հանդիսավոր նիստ տեղի կունենա «Հայպետհիդրոմետ» ծառայության շենքում, որին կմասնակցեն նախարարներ, բուհերի ռեկտորներ, պաշտոնատար այլ անձինք:

«**Ազգը**» շնորհավորելով մասնագիտական տոնի առիթով ՀՀ ԱԻՆ «Հայպետհիդրոմետ» ծառայության օպերատիվ հիդրոօդերեւութաբանության կենտրոնի պետ **Զարուհի Պետրոսյանին**, խնդրեց տեղեկանալ, թե առաջիկա մեկ շաբաթում ինչպիսի եղանակ է սպասվում հանրապետությունում: Առաջիկա երկու օրերին տեղումները հանրապետությունում կպահպանվեն: Մարտի 24-25-ին տեղումներ կլինեն միայն Սյունիքում եւ Տավուշում, իսկ մյուս մարզերում առանց տեղումների եղանակ է սպասվում: Առաջիկա օրերին օդի ջերմաստիճանը կնվազի 4-6 աստիճանով, իսկ լեռնային շրջաններում գիշերը՝ մինչեւ 10 աստիճան ցուրտ կլինի: Երեւանում մարտի 26-ից օդի ջերմաստիճանը 6-10 աստիճանով կբարձրանա՝ հասնելով մինչեւ 20 աստիճան տաքության, սպասվում է առանց տեղումների եղանակ՝ հաջորդ չորս օրերի համար:

Մ. ՄԱԿԱՐՅԱՆ

# Ֆրանսիական Վիենում ԼՂՀ-ի կողքին են

**Ֆրանսիայում ԼՂՀ մշտական ներկայացուցչության հաղորդագրության համաձայն՝ Վիեն քաղաքում տեղի է ունեցել կոնֆերանս՝ նվիրված ԼՂՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձին: Կոնֆերանսին մասնակցել են քաղաքային իշխանությունների եւ հայ համայնքի ներկայացուցիչներ: Արցախի անկախության 20 տարիների ձեռքբերումների մասին զեկուցումով հանդես է եկել Ֆրանսիայում ԼՂՀ մշտական ներկայացուցիչ Հովհաննես Գեւորգյանը, որից հետո ցուցադրվել է վավերագրական ֆիլմ: Նույն օրը Վիենի քաղաքապետ Ժակ Ռեմիյեի հրավերով Հովհաննես Գեւորգյանը հյուրընկալվել է քաղաքապետարանում: Հանդիպման ընթացքում Ժակ Ռեմիյեն՝ որպես քաղաքապետ եւ Ֆրանսիայի Ազգային ժողովի պատգամավոր, իր աջակցությունն է հայտնել ԼՂՀ անկախությանը՝ միաժամանակ նշելով, որ անհրաժեշտ է պատշաճ գնահատական տալ Ադրբեջանի ռազմատենչ հայտարարություններին եւ ագրեսիվ գործողություններին: ԼՂՀ մշտական ներկայացուցիչը իր երախտագիտությունն է հայտնել Վիենի քաղաքապետին՝ միջոցառման իրականացմանն աջակցելու, ինչպես նաեւ Հարավային Կովկասի խաղաղության ամրապնդմանն ու Ադրբեջանի ռազմատենչ քաղաքականության դատապարտմանն ուղղված կոչը ստորագրելու համար:**

**Ավելի վաղ՝ մարտի 16-ին, ինչպես տեղեկացրել էր «Ազգը», Շվեյցարիայի խորհրդարանում հայ-շվեյցարական բարեկամության խորհրդարանական խմբի նախաձեռնությամբ տեղի են ունեցել քննարկումներ Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ: Մենք նշել էինք, որ հայ-շվեյցարական խորհրդարանական խմբի նախագահ Դոմինիկ դը Բումանը ասել էր, որ ինքը այցելել է Ղարաբաղ, եւ հիմա նպատակ ունեն շվեյցարական քաղաքական շրջանակներին տեղեկացնելու «Հայաստանի կենսական խնդիրներից մեկի՝ ԼՂ-ի հակամարտության, դրա աշխարհաքաղաքական հետեւանքների ու խնդիրների մասին»: Քննարկումների մասնակիցներին բաժանվել էին նաեւ թեմատիկ բրոշյուրներ: Որպես եզրափակում՝ հիշեցնենք նաեւ վերջերս Ֆրանսիա կատարած ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի այցը, որի ընթացքում Արցախի նախագահը արտասահմանցի, այդ թվում նաեւ ադրբեջանցի պաշտոնյաների, փորձագետների, լրագրողների, հյուրերի առջեւ նշեց. «Լեռնային Ղարաբաղը այսօր ոչ մեկին իր գոյությամբ չխանգարող կայացած իրավական պետություն է, իսկ նման պետություններին վաղ թե ուշ ճանաչում են»:**

Հ. Ա.

# Հայ-ադրբեջանական լեզգինկա՝ ռուսական Տուապսիում

Ռուսաստանի Տուապսի քաղաքի հրապարակի «Պարադ հաուս» կոչվող շենքի դիմաց կիրակի՝ մարտի 21-ի երեկոյան մի խումբ կովկասցիներ սկսել են լեզգինկա պարել: Տուապսիի քաղաքային տեղեկատվական կայքէջի համաձայն, կովկասցիների պարի երաժշտությունն ապահովվել է ավտոմեքենաներից մեկի ստերեոհամակարգի միջոցով:

Որեւէ պարագայում տղաների արածը չէր կարելի հակաօրինական համարել, սակայն նկատի ունենալով որոշ ժամանակ առաջ Մոսկվայում տեղի ունեցած զանգվածային անկարգությունները, որոնց ժամանակ նաեւ ցուցադրաբար լեզգինկա եւ այլ կովկասյան պարեր էին պարում կովկասցիները, ապա հասկանալի էր, որ այս անգամ էլ նրանց պարն ավարտել չէին թողնի: Եթե ավելացնենք, որ զանգվածային անկարգությունների դեպքեր եղել էին նաեւ Տուապսիում, ուստի հասկանալի է, որ երբ կովկասցիները սկսել են պարել, նրանցով հետաքրքրվել են տեղի իրավապահները:

16 պարողները տարվել են ոստիկանություն, որտեղ էլ նրանք տեղեկացրել են, թե որեւէ կուսակցության չեն պատկանում, որեւէ նպատակ չեն հետապնդել հրապարակում պարելով, այլ միայն հանդիպել են ու այդպես ուրախացել: Ամենահետաքրքրականը, որ պարողների մեծ մասը եղել են ադրբեջանցիներ, իսկ մնացյալը՝ հայեր, ռուսներ: Որպես պարողների ծննդավայր հիշատակվում է ինչպես Բաքուն, այնպես էլ Երեւանը՝ հենց Տուապսիում ծնված հայերի ու ադրբեջանցիների հետ մեկտեղ:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՎՊ նախագահն ու Սպարտակ Մելիքյանը հաշտվել են

Ըստ Վերահսկիչ պալատի մամուլի ծառայության՝ Իշխան Զաքարյանն ու Սպարտակ Մելիքյանը հաշտության պայմանագիր են կնքել: Ծառայության մամուլի հաղորդագրության մեջ նշված է, թե ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2010թ. մարտի 30-ի թիվ 10/4 որոշման հիման վրա իրականացվել է վերահսկողություն Հայաստանի Հանրապետությունում կրթական գործունեության լիցենզավորման, ինչպես նաեւ ուսումնական հաստատությունների եւ դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման գործընթացի նկատմամբ: Վերահսկողության ընթացքում, ի թիվս այլ ուսումնական հաստատությունների, կատարվել է նաեւ «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարանի փաստաթղթերի ուսումնասիրություն: Ի դեպ, ընդհանուր խախտումների համեմատությամբ, «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարանում արձանագրվել են ամենաքիչ խախտումները: Դրանից մոտ 7 ամիս անց՝ Վերահսկիչ պալատի տարեկան հաշվետվության ներկայացման օրը, տեղի է ունեցել ՀՀ ԱԺ պատգամավորի հայտնի ելույթը: Ելույթի հաջորդ օրը Վերահսկիչ պալատի նախագահը սահմանված կարգով դիմել է դատարան՝ հեղինակության եւ համբավի պաշտպանության ու դրանց պատճառված վնասի հատուցման պահանջով: Այնուհետեւ, մինչեւ դատական նիստը, պատգամավոր Ս. Մելիքյանի հետ քննարկվել է խնդիրը եւ ճշտվել է, որ այն առաջացել է թյուրիմացաբար: Պարզելով, որ տեղի ունեցածը թյուրիմացություն է, արձանագրելով, որ վեճը լուծված է, եւ դրսեւորելով բարի կամք, կողմերը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածով սահմանված կարգով, կնքել են հաշտության համաձայնություն եւ ներկայացրել դատարան: Նշված հաշտության համաձայնությունը հաստատվել է ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԿԴ1/0895/02/10 քաղաքացիական գործով 25.01.2011թ կայացված վճռով:

ԱԶԳ **Մտահոգություններ**

# Երեւանը դարձնել մեգապոլիս

Հանրային խորհրդի նախագահ **Վազգեն Մանուկյանը** ցավով է փաստում, որ Երեւանը կորցրել է իր ավանդույթները ու փոխել պատկերը: Չկան նախկին բարյացակամ վերաբերմունքը, գեղեցիկ պուրակները, քաղաքի անվտանգությունը: «Սակայն պետք է հասկանանք, որ մայրաքաղաքը պետք է համապատասխանի նոր երեւույթներին: Ամենակարեւոր հարցն այն է, որ քաղաքին առնչվող հարցերը քննարկվեն երեւանցիների հետ: Հաճախ իշխանությունները դրական որոշումներ են կայացնում, որոնք այնքան էլ հասկանալի ու ընդունելի չեն հասարակության համար: Հետեւաբար, անհրաժեշտ է օրենքով ամրագրել, որ քաղաքին առնչվող մի շարք հարցեր հանրաքվեի միջոցով լուծվեն, եւ քաղաքային իշխանությունն առաջնորդվի քաղաքացիների կարծիքով», ասաց նա Հանրային խորհրդում երեկ կայացած նիստի ժամանակ: Քաղաքապետ **Կարեն Կարապետյանի** եւ փոխվարչապետ **Արմեն Գեւորգյանի** մասնակցությամբ նիստի նպատակն էր անդրադառնալ քաղաքի հիմնախնդիրներին, զարգացման հեռանկարներին ու Երեւանը դարձնել մեգապոլիս:

Ներկայացնելով քաղաքի էկոլոգիական խնդիրները՝ բնապահպան **Կարինե Դանիելյանը** փաստեց, որ քաղաքը պետք է ծառայի բնակչությանը, եւ այն պետք է լինի հարմարավետ: «Արդյոք Երեւանն այդպիսի՞ն է: 10-12 տարի Երեւանում զարգանում են կոմերցիոն շինարարությունն ու ճարտարապետությունը: Քաղաքում առաջացել է տրանսպորտային կոլապս, էկոլոգիական անվտանգության հարցը նույնպես խնդիր է, օդի աղտոտվածությունը գերազանցում է նորման մի քանի անգամ: Բազմաթիվ պատմական շենքեր քանդվեցին: Ցավոք, Սպիտակի երկրաշարժից դասեր չքաղեցինք: Երեւանի կենտրոնում շինարարությունն այնքան է խտացել, որ դպրոցների կանաչ տարածքների հաշվին կառուցում են բարձրահարկ շենքեր: Չենք մտածում, իսկ ի՞նչ կլինի եթե հանկարծ մայրաքաղաքում երկրաշարժ գրանցվի: Անհրաժեշտություն կա ստուգելու մայրաքաղաքի սեյսմիկ անվտանգությունը: Մայրաքաղաքի բազմաբնակարան շենքերի նկուղները դարձել են գիշերային ակումբներ, խանութներ եւ համակարգչային սրահներ, ինչը թուլացնում է շենքերի ամրությունը: Օղակաձեւ այգին վերածվել է օղակաձեւ ռեստորանի: Քաղաքի կենտրոնում կանաչ տարածքներ չեն մնացել», ասաց բնապահպանը՝ հարց ուղղելով քաղաքապետին՝ քաղաքը բիզնեսի՞ համար, թե՞ բիզնեսը՝ քաղաքի:

«Քաղաքը բիզնեսի համար է, թե բիզնեսը՝ քաղաքի, ես կասեի՝ երկուստեք պետք է լինի: Հայտարարել ենք, որ կանաչ գոտիներում որեւէ շինարարություն թույլ չենք տալու: Ճարտարապետությունը պետք է լինի կոմերցիոն, սակայն պետք է լինեն սահմանափակումներ: Կոմերցիոն շինարարությունը հակաէկոլոգիական չէ: Ողջ աշխարհն է այդպես զարգանում: Երեւանը մեգապոլիս է, չպետք է մոռանալ, որ սա մայրաքաղաք է եւ չես կարող առավոտյան զարթնել աքաղաղի ձայնից կամ լսել գետակի քչքչոցը», ասաց Կարապետյանը:

Մեգապոլիս դառնալու գրավականներից է նաեւ բացօթյա առեւտրի արգելումը: Քաղաքապետը հերթական դիմեց պատգամավորներին՝ ընդգծելով, որ կատարում է օրենքով սահմանված գործառույթ: «Պատգամավորներին ասել եմ՝ օրենքը փոխեք՝ Երեւանը մյուս օրը կդառնա շուկա: Եթե սոցիալապես անապահով խավին նեղացրել ենք, ասեմ՝ նրանց համար տեղ ենք հատկացրել շուկաներում: Նախատեսում ենք ստեղծել մինի շուկաներ: Այնտեղ նրանց համար ավելի լավ կլինի, քան փողոցում: Մեզ մեղադրեցին, թե ինչու նախօրոք չենք բացել շուկաներ, հետո արգելել բացօթյա առեւտուրը, սակայն դրան կա մի պարզ բացատրություն. մինի շուկաները չեն կարող ստեղծվել առանց նպատակի: Ուղղակի պետք է փոխել նաեւ մեր հասարակության մտածելակերպը: Նրանք ցանկանում են, որ կանաչին, կաղամբը վաճառվի հենց իրենց «պադեզդի» դիմաց, որ էլ նեղություն չքաշեն ու գնան շուկա»:

Հանրային խորհրդի անդամ **Խոսրով Հարությունյանն** անդրադարձավ ներքաղաքային տրանսպորտի խնդրին: Հարությունյանն առաջարկում է կանոնակարգել վերգետնյա ավտոկայանման խնդիրները:

Քաղաքապետի գնահատմամբ՝ մեկ օր շուտ պետք է տրանսպորտը բիզնեսին տալ: «Մենք պետք է մի կարեւոր խնդիր լուծենք: Կրճատենք միկրոավտոբուսների թիվը, ավելացնենք ավտոբուսների թիվը: Միջքաղաքային տրանսպորտը պետք է սահմանափակել քաղաքի սահմանի վրա: Այն ոլորտները, որոնք բիզնես նշանակություն չունեն, կառավարելու է քաղաքապետարանը: Հակառակ պարագայում՝ կտրամադրվի մասնավոր հատվածին: Այդ կերպ կնվազեն կոռուպցիոն ռիսկերը»:

ՀԽ-ի տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման հարցերի հանձնաժողովի նախագահ **Կորյուն Առաքելյանի** մտահոգության հիմքում բազմաբնակարան շենքերն էին: Քաղաքապետը առանձնահատուկ կարեւորեց վերելակների հիմնանորոգման աշխատանքների իրականացումն ապահովող համակարգի ձեւավորման անհրաժեշտությունը:

«Պետք է ուշադրություն դարձնել վթարային շենքերի բնակիչներին բնակարաններով ապահովելու խնդրին: Փորձելու ենք մաքսիմալ ակտիվացնել չօգտագործվող բնակարանային ֆոնդը: Շատ տխուր է վերելակների վիճակը: Պետք է նրանց մեծ ուշադրություն դարձնենք: Կարծում եմ՝ ճիշտ կլինի, որ վերելակների շահագործումը տրվի մասնավոր սեկտորին»:

Փոխվարչապետ Արմեն Գեւորգյանի մեկնաբանությամբ՝ քաղաքաշինության վերաբերյալ հասարակությունը երբեք միակարծիք չի եղել: «Ակնհայտ է մի բան՝ պետք է բոլոր հարցերը քննարկվեն: Շենքերի նորոգման համար անհաժեշտ է 5 մլրդ դրամ: Սահմանափակ ռեսուրսների պարագայում առավել նպատակահարմար են առաջնային խնդիրները լուծել: 2 միլիարդ դրամ է հատկացվելու այս տարի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման համար»:




ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ

# Ժեկերը պետք է վերափոխեն իրենց գործելաոճը կամ վերացվեն

Եթե ժեկերը չեն ուզում փոխել իրենց գործելաոճն ու աշխատանքային մեթոդները, մենք էլ չենք ուզում ենթարկվել նրանց կամայական դրամահավաքությանը: Այդ հիմնարկները, որպես հին մնացուկներ եւ նոր ժամանակներում իրենց չարդարացնող մարմիններ, վաղուց պիտի վերացված լինեին, մանավանդ քաղաքացիների հիշողության մեջ մնացել են որպես գործարքների, կեղծիքների ու զանազան դրամաշորթության ընդունակ կառույցներ. հիմա էլ բնույթը իրենց նույնն է, պարզապես գործառույթներն են սահմանափակվել: Կոմունալ վճարումներից հյուծվող մեր հասարակության համար սրանք միանգամայն ավելորդ բեռ են: Կոմունալ վճարումները հատկապես ձմռան ամիսներին՝ թալանի պես բան են, երբ միջին աշխատավարձով ապրող ընտանիքի բյուջեին անդրադառնաս, այս բառի գործածումը նույնիսկ մեղմ է: Միայն ջեռուցման համար 40-60.000 դրամ, մնացածը՝ էլ. էներգիա, ջուր, հեռախոս կամ ինտերնետն էլ եթե ավելացնենք եւ աշխատավարձի համեմատական անցկացնենք, կարելի է պատկերացնել, թե գոյության ինչ կենսակերպ է քարշ տալիս հայ մարդը: Այդուամենայնիվ, վերոհիշյալ կոմունալ ծառայությունները գործում են ինչպես իրավաբանական-օրենսդրական, նաեւ տրամաբանության շրջանակներում: Դրանց վարձը շատ է, քիչ է, կարեւորն այն է, որ սպասարկող այս ընկերությունները մեզ՝ սպառողներիս հետ ունեն հստակ վավերացված պայմանագիր՝ պարտականությունների ու իրավունքների երկկողմանի համաձայնագրի տեսքով: Եվ երբ սպառողը խախտում է դա, չի վճարում, սպասարկումը դադարեցվում է: Եվ իրենք էլ պարտավորված են որեւէ խնդրի առկայությամբ (ջրազրկում, հոսանքազրկում եւ այլն) իրազեկել բնակչությանը, ինչը եւ արվում է կանոնավորապես, հեռուստատեսությամբ կամ մամուլով:

Ինչ ծառայություն են մատուցում մեզ ժեկերը եւ ինչի դիմաց պիտի վճարենք: Կա՞ արդյոք նման հաստատված պայմանագիր քաղաքացիների եւ այս հիմնարկների միջեւ: Շենքերի ներքին եւ արտաքին հարդարման աշխատանքնե՞ր, ջրագծերի, տանիքների վերանորոգո՞ւմ, բակերի լուսավորությա՞ն կարգավորում եւ նման այլ բաներ: Արվո՞ւմ են արդյոք դրանք: Այն ժեկը, որ պարբերաբար սպառնում է բնակիչներին դատարանի ահով, չի կատարում իր պարտավորությունները: Մեր շենքը (Քեռու 58), օրինակ, երբեք նման «վերաբերմունքի» չի արժանացել. չկան միջանցքի պատուհաններ կամ ապակիներ, վերելակը եւ աստիճանները մշտապես անմաքուր վիճակում են, միջանցքների ծեփաթափ առաստաղներն ու պատերը չեն վերանորոգվում, անձրեւներից կաթող տանիքը՝ նույնպես. եթե ինչ-որ բան արվում է, բնակիչների ջանքերով: Երբ այս բաները մատնացույց ես անում, ժեկի պետը աչքդ է խոթում աղբահանությունը: Սակայն դա էլ երբեք կանոնավոր չի արվում, հաճախակի են խցանումներն ու կուտակումները, ամռան ամիսներին աղբաջրերը հոսում, լցվում են բակ, պատահել է նաեւ եւ կոյուղաջրերի օրերով հոսք, նեխահոտ ու հակասանիտարական վիճակ եւ ոչ մի ուշադրություն: Այսպիսի հարցերին շենքի իրազեկ բնակչուհին վկայում է, որ աղբահանությունն էլ կատարվում է բնակիչներից մեկի համառ ահազանգերի շնորհիվ:

Այսպիսի որակի չծառայությունների դիմաց բնակչի վրա ֆիքսված գումար չեն դնում, մանավանդ երբ իրենց աշխատանքը, պարտավորությունները կամայական են եւ բնակչի համար անորոշ: Եվ իրենց մասնագետի կողմից երբեմն մատուցվող ծառայությունն անգամ վճարովի է. ամենապարզ գործողությունների համար դրամ են պահանջում, ինչը թույլատրելի չէ:

Ժեկերը պետք է վերակազմավորեն իրենց աշխատանքը՝ մշակեն քաղաքացիների հետ քաղաքակիրթ հարաբերվելու գործելաոճ՝ վավերացված օրինական պայմանագրային տեսքով. կատարեն պարտավորությունները, նոր պահանջեն դրամ, չէ՞ որ դրամը ինչ-որ բանի դիմաց են տալիս: Թե չէ սովորություն են դարձրել առավոտ կանուխ օրդ թունավորել՝ հեռախոսազանգով ու դատարան տալու պարտադիր սպառնալիքով: Հետաքրքրական է, այս մեթոդով դատարան քարշ տված քաղաքացիներին ինչի՞ հիման վրա են պատժում՝ գրավոր ո՞ր համաձայնագրի:

Իսկ առհասարակ որպես ոչ լիարժեք գործող եւ անկարող մարմիններ, հանրությանն անօգտակար այս միավորները պետք է պարզապես լիկվիդացնել՝ փոխարինել գործող կառույցներով, ինչպես շատ այլ ծառայությունների պարագայում դա արվեց:

Ս. Բ.

# «Երկրաշարժից անօթեւան ընտանիքներին վերջապես ե՞րբ են զերծ պահելու ավելորդ թղթարարությունից ու քաշքշուկներից»

ՀՀ քաղաքաշինության նախարարության՝ աղետի գոտու բնակարանների բաշխման հանձնաժողովի աշխատանքային խումբը Գյումրիում 2009-2010 թթ. բնակարան ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու էր հրավիրել 2400 ընտանիքների, սակայն պահանջվող փաստաթղթերը կարողացան ներկայացնել նրանցից ընդամենը 1200-ը: Բնակբաշխման ողջ գործընթացի դիտարկում իրականացրած «Շիրակ կենտրոն» հասարակական կազմակերպության ուսումնասիրություններով՝ հարյուրավոր անօթեւան ընտանիքների կողմից փաստաթղթեր չներկայացնելու հիմնական պատճառն այդ ընտանիքների մեկ կամ մի քանի անդամների՝ հանրապետությունից տեւական ժամանակ բացակայելն ու նրանցից պահանջվող լիազորագիրը ստանալու դժվարությունը, շատ դեպքերում՝ նաեւ անհնարինությունն էր:

Գործող կարգում ՀՀ կառավարության 2010 թ. օգոստոսի 5-ի որոշմամբ կատարված փոփոխություններով այժմ այդպիսի խնդիրներ ունեցող ընտանիքներին հնարավորություն է տրվում ընտանիքի բացակա անդամի անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու անհնարինության մասին գրավոր հայտարարությամբ օգտվելու բնակարան ստանալու իրենց իրավունքից: Ճիշտ է՝ փաստաթղթեր չներկայացրած անդամն այլեւս ընտանիքի կազմում չի հաշվառվում, նրա բնակարանային ապահովման նկատմամբ պետական պարտավորությունները համարվում են դադարեցված եւ տվյալ ընտանիքն էլ բնակմակերես է կորցնում, ինչը տվյալ որոշման բացասական կողմն է: Այնուամենայնիվ՝ դրական կողմը եւս կա:

Սակայն այս տարի, երբ արդեն սկսվել է երկրորդ փուլով բնակարանների բաշխման նպատակով փաստաթղթերի ընդունումը, ընտանիքի բացակա անդամներ ունեցող անօթեւանները կրկին հայտնվել են փակուղու առջեւ: Ըստ այս մասին «Շիրակ կենտրոնի» երեկ տարածած հայտարարության, բնակարանների բաշխման հանձնաժողովին աջակցող աշխատանքային խումբը նրանցից պահանջում է կառավարության հիշյալ որոշմամբ սահմանված եւ Գյումրու նոտարական գրասենյակում վավերացված հայտարարություն այն մասին, որ ընտանիքի բացակա անդամի վերադառնալու դեպքում իրենք պատրաստ են նրան ապահովել բնակմակերեսով: Սակայն Գյումրու նոտարական տարածքի նոտարը սովորաբար տարաբնույթ պատճառաբանություններով հրաժարվում է վավերացնել շահառուներից պահանջվող այդ հայտարարությունները: «Օրերս արձագանքելով մեր գրասենյակ դիմած անօթեւանների բողոքներին,- նշվում է հայտարարության մեջ,- հանդիպեցինք Գյումրու նոտարական տարածքի նոտար Ռոբերտ Մուկուչյանի հետ: ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշման չկատարելն ու բնակարան ստանալու հավակնորդ ընտանիքների հայտարարությունները միայն բացառիկ դեպքերում վավերացնելը նոտարը պատճառաբանեց այն հանգամանքով, թե իրեն հիմնականում հավաս չեն ներշնչում դիմողների այն հայտարարությունները, ըստ որոնց նրանց ընտանիքների բացակա անդամներն իրոք չեն կարող լիազորագրեր ուղարկել: Ապա նա նաեւ կասկածանք հայտնեց, թե շատ քաղաքացիներ հնարավոր է որ բնակարանը ստանալուց անմիջապես հետո վաճառեն, քանի որ ի տարբերություն նախորդ տարիների՝ ներկայումս նման արգելք չկա...»:

Եթե պետք է տարբերակված մոտեցում ցուցաբերվեր եւ նոտարի անձնական քմահաճույքով որոշվեր, թե ե՞րբ եւ ո՞ր անօթեւան ընտանիքի նկատմամբ կարող է կիրառվել կառավարության այդ որոշումը, ապա գուցե արժեր այդ մասին եւս հստակ գրել որոշման մեջ: Արդյո՞ք այս տարբերակված մոտեցումը հղի չէ կոռուպցիոն ռիսկերով: Կամ եթե հանրապետության իշխանություններն այնուամենայնիվ տեղյակ են նոտարի այսպիսի գործելաոճին, ապա արդյո՞ք դա դիտավորյալ չի արվում, որպեսզի շահառուների թիվն արհեստականորեն նվազեցվի՝ պահանջվող քանակից պակաս բնակարաններ կառուցելու նպատակով: «Ուզում ենք հավատալ,- այս եւ նման այլ հարցադրումներից հետո ասվում է «Շիրակ կենտրոն» ՀԿ-ի հայտարարությունում,- որ ՀՀ իշխանությունները, մասնավորապես ՀՀ վարչապետը, ՀՀ քաղաքաշինության եւ արդարադատության նախարարները կարձագանքեն մեր այս հայտարարությամբ հնչեցված ահազանգին եւ աղետի գոտում ավելի քան երկու տասնամյակ բնակարանների սպասող անօթեւանների շահերից ելնելով, ինչպես նաեւ բնակարանների բաշխման գործընթացի առավել արդյունավետ կազմակերպման նպատակով կտրուկ միջոցների կդիմեն՝ բնակարաններ ստանալու հավակնորդ ընտանիքներին ավելորդ թղթարարությունից եւ քաշքշուկներից զերծ պահելու համար»:

Գ. Մ.

# Յոթ երգ գիտի, յոթն էլ՝ «հայկական վտանգի» մասին

Թուրքիայի վարչապետի մոսկովյան այցի շոշափելի արդյունք է համարվում այդ երկրում ռուսաստանյան տեխնոլոգիայով ատոմակայան կառուցելու մասին կողմերի միջեւ ձեռք բերված պայմանավորվածությունը:

Դա, սակայն, չխանգարեց, որ Թուրքիայի էներգետիկայի նախարարը, օգտագործելով ճապոնական ատոմակայանների վերաբերյալ երկրաշարժից հետո ստեղծված միջազգային մտահոգության առիթը, խոսի «Մեծամորի ԱԷԿ-ը փակելու անհրաժեշտության» մասին: «Բացատրությունը» մեկն էր. «Հայաստանը գտնվում է սեյսմիկ ռիսկի գոտում»:

Այն, ինչ ասվում է Թուրքիայում, պարտադիր արձագանքվում է Ադրբեջանում: Եվ ահա քաղաքագետի համարում ունեցող Ֆիքրեթ Սադիխովը հանդես է եկել ծավալուն «մենախոսությամբ», որով Հայաստանի հարեւան երկրներին հորդորում է միջազգային ատյաններում բարձրացնել «Մեծամորի ատոմակայանի անհապաղ փակման հարցը»:

Սադիխովը, սակայն, թուրք նախարարից մի քայլ առաջ է «մտածում» եւ նենգամտորեն ասում է, որ «դրանով վերջ կտրվի Հայաստանի կողմից շահարկումներին»:

Ինչի՞ մասին է խոսքը՝ «քաղաքագետը» չի մանրամասնում:

Պետք է, ըստ երեւույթին, ենթադրել, որ «ապագա պատերազմի» ադրբեջանցի «ռազմագետներին» լրջորեն մտահոգում է այն, որ «մարտական հավանական գործողությունների թատերաբեմում» կա ԱԷԿ: Դա, ամենայն հավանականությամբ, շատ որոշակիորեն սահմանափակում է ադրբեջանական ռազմական մեքենայի «հայրերի» ախորժակը: Եվ, ընդհակառակը, ատոմակայանի բացակայությունը թույլ կտար, որ Ադրբեջանում, գուցե նաեւ Թուրքիայում, Հայաստանի դեմ կանխածրագրվեին ավելի ընդգրկուն ռազմական գործողություններ:

Այդ երկրից հնչող մյուս բոլոր «անհանգստությունները», որ, իբր «ֆորսմաժորային իրավիճակում Մեծամորի ԱԷԿ-ից կտուժեն տարածաշրջանի բոլոր ժողովուրդները եւ անգամ Ռուսաստանի հարավը», զուտ փարիսեցիություն են:

Քանի որ եթե առաջնորդվելու լինենք «ֆորս-մաժորի սկզբունքով», ապա Թուրքիան եւ Ադրբեջանը նույնպես գտնվում են սեյսմիկ ռիսկի գոտում, ուրեմն ոչինչ չպետք է ձեռնարկեն: Ո՞վ է երաշխավորել, որ Թուրքիայում կառուցվելիք ատոմակայանը մի օր չի հայտնվի ավերիչ երկրաշարժի էպիկենտրոնում: Ի՞նչ կպատահի, եթե վաղն Ադրբեջանում հուժկու ցնցումներ լինեն, եւ փլուզվի, ասենք, Մինգեչաուրի կամ Շամքորի ՀԷԿ-ի ամբարտակը:

Կիրակոս Գանձակեցի պատմիչն ասում է, որ Ալիհարակ (ադրբեջանական ձեւով՝ Գյոյ-գյոլ) լիճն առաջացել է հզոր երկրաշարժից հետո: Ի՞նչ երաշխիք, որ նոր երկրաշարժ չի լինի՝ այս անգամ էլ բացելով լճի ելքը: Ի՞նչ երաշխիք, որ երկրաշարժ չի լինի Կասպից ծովում, եւ Բաքուն ջրամույն չի դառնա: Կամ՝ հավանական երկրաշարժից չի պայթի Բաքու-Ջեյհան նավթատարը եւ չի պատուհասի տարածաշրջանը:

Այս տրամաբանությամբ՝ չի կարելի փորփրել Կասպից ծովի ընդերքը, չի կարելի արդյունահանել նավթ եւ գազ, չի կարելի էներգակիրներ տարանցել՝ չունենալով հստակ երաշխիքներ:

Իսկ ինչ վերաբերում է Մեծամորի ԱԷԿ-ի փակմանը, ապա այդ մասին երեւի հնարավոր կլինի խոսել միայն այն դեպքում, երբ լուծված կլինի Հայաստանի հաղորդակցության ուղիների բացման հարցը: Ահա այստեղ է, որ մեծ անելիք ունեն Թուրքիան եւ Ադրբեջանը: Եվ եթե այդ երկրներում մտահոգ են տարածաշրջանի ապագայով, ապա ինչո՞ւ են շարունակում փակի տակ պահել Հայաստանի հետ իրենց սահմանները:

Թե չէ ստացվում է, որ Անկարայում եւ Բաքվում «յոթ երգ գիտեն, յոթն էլ՝ «հայկական վտանգի» մասին»: Մինչդեռ վտանգն իրականում տարածաշրջանի մի երկրի, տվյալ դեպքում՝ Հայաստանի դաժանագույն շրջափակումն է եւ նրան բոլոր նախագծերից մեկուսացնելու Թուրքիայի ու Ադրբեջանի համատեղ ձեռնարկումը:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# «Արաբական կրակը» թերեւս չվառվի նավթով հարուստ կովկասյան երկրում

Նման եզրակացության է եկել ամերիկյան The Wall Street Journal-ը Մարկ Չեմպիոնի եւ Աիդա Սուլթանովայի՝ նախօրեին տպագրված հոդվածում: Արձանագրելով, որ մարտի 11-ին եւ 12-ին «երիտասարդ ադրբեջանցիները դուրս էին ելել փողոց ընդդեմ ավտորիտար ռեժիմի», Չեմպիոնն ու Սուլթանովան նկատում են, որ այնուամենայնիվ Facebook-ի համապատասխան կոչերը Ադրբեջանում նվազագույն աջակցություն ստացան. «Կովկասի նավթով հարուստ երկրում ոստիկանությունը արագորեն շրջափակեց ցուցարարներին. ձերբակալվեցին ավելի քան 40 մարդ, մյուսները ցրվեցին», արձանագրում են հոդվածագիրները: Որպես այս ամենի պատճառ Սուլթանովան եւ Չեմպիոնը նշում են մի քանի հանգամանքներ, մասնավորապես այն, որ «ի տարբերություն արաբական երկրների, որտեղ հեղափոխությունը հաջողություն ունեցավ, կոնկրետ Ադրբեջանում, ինչպես նաեւ հարեւան Վրաստանում եւ Հայաստանում սոցիալ-տնտեսական իրավիճակը անհամեմատ այլ է»: Այս համատեքստում Միջազգային ճգնաժամային խմբի կովկասյան տնօրեն Լոռենս Շիթսը նշել է. «Ես ուղղակի չեմ տեսնում կրիտիկական տրամադրված զանգված Ադրբեջանում»: Շիթսը սա հիմնավորել է նրանով, որ «Ադրբեջանում կյանքի մակարդակը որոշակիորեն բարձրացել է ի հաշիվ նավթի վաճառքից գոյացած մուտքերի»: Մյուս պատճառը, որով, ըստ ամերիկյան պարբերականի հոդվածագրերի, հնարավոր չեղավ Ադրբեջանում հավաքել մեծաքանակ ցուցարարներ, այն էր, որ «Շատ ադրբեջանցիներ չհավատացին Facebook-ի շարժմանը, քանի որ դրա կազմակերպիչներից միայն մեկն է բնակվում Ադրբեջանում, մնացածը արտասահմանում են»: Այս առումով հասկանալի է Վաշինգտոնում Ադրբեջանի դեսպանատան առջեւ արտասահմանում ապրող ադրբեջանցիների իրականացրած բողոքի ակցիան: «Թուրան» գործակալությունը տեղեկացնում է, որ ցուցարարները, «ձեռքերին «Ազատություն Ադրբեջանին» պաստառներ», երկրի իշխանություններից պահանջել են անհապաղ ազատ արձակել մարտ ամսվա սկզբին ձերբակալված ակտիվիստներին: Վաշինգտոնի ադրբեջանցի ցուցարարները, համաձայն ադրբեջանական ընդդիմադիր գործակալության, հայտարարություն են տարածել, որում մասնավորապես գրված է. «Ադրբեջանի քաղաքացիների իրավունքները ամեն քայլափոխի ոտնահարվում են, իշխանությունները խլում են մարդկանց ունեցվածքը՝ քաղաքացիներին զրկելով տներից եւ բիզնեսից: Ոստիկանությունը հետապնդում է այն անձանց, որոնք փորձում են պաշտպանել իրենց իրավունքները: Մենք պահանջում ենք վերջ դնել այս եւ ամեն տեսակի անօրինություններին»: Որպես այս կոչի «պատասխան»՝ ադրբեջանական իշխանությունների արձագանքը չի ուշացել: Համաձայն «Ազադլիգ»-ի՝ մարտի 18-ին Բաքվում չի կայացել ադրբեջանցի ռոք երաժիշտ Ազեր Մեմմեդովի համերգը, քանի որ չեն թույլատրել երկրի նախագահականից: Այս մասին «Ազադլիգ»-ին տեղեկացրել է հենց երաժիշտը՝ հավելելով, որ համերգից երկու ժամ առաջ ակումբի աշխատակիցները (խոսքը Բաքվի ռոք ակումբի մասին է-Հ. Ա.) ասել են իրեն, որ նախագահականից զանգահարել են եւ պահանջել, որ իր համերգն արգելվի: Հիմնականում Ստամբուլում ապրող եւ ստեղծագործող ադրբեջանցի երաժիշտը, որը մեծ հեղինակություն է վայելում սոցիալական ցանցերում՝ թուրքախոս այցելուների շրջանում, երգեր ունի՝ նվիրված Ադրբեջանում ձերբակալված բլոգերներ Էմին Միլլիին եւ Ադնան Հաջիզադեին: «Անկախ ամեն ինչից՝ ես կիրականացնեմ իմ համերգը Ադրբեջանում ամեն գնով», եզրափակել է «Ազադլիգ»-ի հետ զրույցը Ազեր Մեմմեդովը:

Հ. ԱՓՅԱՆ

# 7 տարվա բանտարկություն՝ Իսրայելի նախկին նախագահին

Իսրայելի նախկին նախագահ Մոշե Կացավը երեկ 7 տարվա բանտարկության եւ 2 տարվա պայմանական ազատազրկման է դատապարտվել երկու բռնաբարության եւ սեռական բնույթի այլ հանցանքների համար: Նա նաեւ 125 հազար շեքել տուգանք կվճարի տուժածներին:

Ֆրանսպրեսը հաղորդում է, որ 2007-ին՝ իր նախագահության 7-ամյա ժամկետի ավարտից 2 շաբաթ առաջ պաշտոնը թողած Մոշե Կացավը ներկայումս 65 տարեկան է: Նա մեղադրվում է 1990-ականներին իր աշխատակցուհիների հանդեպ կատարած ոտնձգությունների մեջ: Քննության նախնական փուլում Կացավը համաձայնել էր գործակցել դատախազության հետ. նվազ ծանր հանցանքները խոստովանելու դիմաց պետք է հանվեին բռնաբարության մեղադրանքները, ինչը թույլ կտար խուսափել բանտարկությունից: Բայց հետագայում Մոշե Կացավը հրաժարվել էր գործարքից, որոշել էր պայքարել իր լիակատար արդարացման եւ «բարի համբավի վերականգնման» համար:

Երեքուկես ամիս առաջ Թել Ավիվի շրջանային դատարանը նրան մեղավոր էր ճանաչել երկու բռնաբարության, անվայել վարքի, սեռական ոտնձգությունների եւ քննության ընթացքը խանգարելու փորձերի մեջ:

ՃԱՊՈՆԻԱ

# Ռադիոակտիվ նյութեր ծովում՝ «Ֆուկուշիմա-1»-ի մոտ

Վերջին տասն օրվա ընթացքում մի քանի անգամ վթարված ճապոնական «Ֆուկուշիմա-1» ատոմակայանի մերձակա ծովային ջրում հայտնաբերվել է ռադիոակտիվ նյութերի բարձր մակարդակ: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրեսը, վկայակոչելով ԱԷԿ-ի կառավարիչ Tokyo Electric Power ընկերության ներկայացուցչին:

Օրինակ, յոդ-131-ի մակարդակը նորման գերազանցում է 126,7 անգամ, ցեզիում-134-ի մակարդակը՝ 24,8 անգամ: Բացի դրանից, ցեզիում-137-ի մակարդակը պետության հաստատած ստանդարտից բարձր է 16,5 անգամ: Կոբալտ-58-ի մակարդակը, ընդհակառակը, նորմայից ցածր է:

Ընկերության ներկայացուցիչը հայտարարել է, որ ռադիոակտիվ նյութերի տվյալ հարաբերակցությունը վտանգ չի ներկայացնում մարդկանց առողջության համար: «Ֆիգարո» թերթի կայքը տեղեկացնում է, որ ԱԷԿ-ի տարհանված աշխատակիցները մարտի 22-ին վերադարձել են աշխատատեղեր:

Հիշյալ ռադիոակտիվ նյութերի բոլոր չափումները կատարվել են ծովի ջրում՝ «Ֆուկուշիմա-1»-ից 100 մետր հարավ:

# Գվատեմալայի առաջին տիկինն ամուսնալուծվում է, որպեսզի մասնակցի ընտրություններին

Գվատեմալայի առաջին տիկին Սանդրա Տոռեսը ամուսնուց՝ երկրի նախագահ Ալվարո Կոլոմից բաժանվում է, որպեսզի մասնակցի առաջիկա նախագահական ընտրություններին: Այդ մասին հաղորդում է Europa Press գործակալությունը:

Պաշտոնական տվյալների համաձայն, զույգն արդեն փաստաթղթեր է ներկայացրել ամուսնալուծության նպատակով: Դրանցում նշվում է, որ Տոռեսը եւ Կոլոմը որոշել են բաժանվել փոխադարձ համաձայնությամբ: Նման ձեւակերպման դեպքում ամուսնալուծության խնդրանքը բավարարվում է առանց ձգձգումների:

Ընդդիմությունը հիմա էլ է քննադատում առաջին տիկնոջ վարքագիծը: Մոլինան նրա ամուսնալուծությունն անվանել է «խեղկատակություն», որը չի օգնի Տոռեսին: Աջերի առաջնորդ Մոլինան հիշեցրել է, որ կասում է երկրի սահմանադրության 186-րդ հոդվածին, որը գործող նախագահի հարազատներին եւ ընտանիքի անդամներին արգելում է պայքարել նախագահի պաշտոնի համար:

186-րդ հոդվածը հստակորեն չի սահմանում «հարազատներ» հասկացությունը, ուստի ամուսնալուծվածները եւս կարող են համարվել ազգականներ:



Սանդրա Տոռեսը նախագահական ընտրություններին մասնակցելու մտադրություն էր հայտնել մարտի սկզբներին: Նա իր թեկնածությունն էր առաջադրել կառավարող սոցիալիստական Հույսի ազգային միությունից, որի ղեկավարը նախագահ Կոլոմն է:

Նախագահի տիկնոջ հայտարարությունը հարուցել էր ընդդիմադիր Հայրենասիրական կուսակցության տարակուսանքը, որի ղեկավար Օտտո Պերես Մոլինան հիշեցրել էր, որ առաջին տիկնոջ թեկնածությունը հակասում է երկրի սահմանադրության...

Ըստ Մոլինայի, ընդդիմադիրներն ամեն դեպքում թույլ չեն տա, որ նախագահը եւ նրա կինը խախտեն սահմանադրությունը:

Գվատեմալայում նախագահական ընտրությունները տեղի կունենան 2011-ի սեպտեմբերին: Սահմանադրությունը Կոլոմին թույլ չի տալիս ընտրվել 2-րդ անգամ: Իսկ հանրային հարցումները վկայում են, որ բնակչության 40 տոկոսից ավելին պատրաստ է քվեարկել Մոլինայի օգտին եւ միայն 11 տոկոսն է պատրաստակամություն հայտնում Տոռեսին:

# Սիրիացիները պահանջում են իրավունքների ընդլայնում, կաշառքի վերացում

Սիրիայի հարավում՝ Դըրաա քաղաքում հազարավոր ցուցարարներ երթ են կազմակերպել, պահանջելով քաղաքացիական ազատությունների ընդլայնում եւ կաշառակերության վերացում: Ցուցարարները հրկիզել են մի քանի շենք, ներառյալ կառավարող Բաաս կուսակցության տեղական բաժանմունքը:

BBC-ն հաղորդում է, որ Դըրաայում հակակառավարական ելույթները շարունակվում են մարտի 18-ից, երբ ոստիկանների հետ բախումների հետեւանքով սպանվեց 4 ցուցարար, վիրավորվեցին տասնյակ մարդիկ: Փարիզը դատապարտեց Դամասկոսի դաժանությունները:

Մարտի 21-ին ցույցերը նոր թափով վերսկսվեցին նախօրեին անվտանգության ուժերի կրակից սպանված 23-ամյա մի երիտասարդի թաղման կապակցությամբ: Ցուցարարները պահանջում էին ազատություն եւ կաշառքի վերացում: Նույն օրը հարյուրավոր մարդիկ նստացույց արեցին Սիրիայի հարավում գտնվող մեկ ուրիշ քաղաքում՝ Ջասեմում:

Նախագահ Բաշար Ասադը, որի Բաաս կուսակցությունը հինգ տասնամյակ իշխում է Սիրիայում, անհանդուրժողաբար է վերաբերվում այլախոհության դրսեւորումներին: Իշխանությունները միաժամանակ խոստումներ են տալիս: Այսպես, բանտից ազատվել են հեղափոխության կոչեր արած 15 դեռահասներ, եւ միաժամանակ հայտարարվել է, որ երկրում բանակային ծառայության ժամկետը 3 ամսով կրճատվում է:

## Երկրաշարժ եւ ցունամի

# Ճապոնացի փիլիսոփայի դասերը

Եթե չեմ կարողանում քնել, նշանակում է, որ կամ բարձր ջերմություն ունեմ, կամ էլ իմ առջեւ ողջ հասակով մեկ մի ահռելի խնդիր է ծառացել: Այն երեկո, երբ Ջասկի կղզում մեր հնամաշ կախովի շարժիչի պատճառով շրջվեց ռետինե նավակը, եւ քիչ էր մնում, որ զոհվեին տղաները, ես ընդհանրապես չպառկեցի քնելու, որովհետեւ գիտեի, որ չեմ կարող: Եվ նստեցի գրամեքենայիս առջեւ: Հիշում եմ, որ հարցրել էի կղզու կապիտան-գավառապետ Կլաուդիո Մոնտենեգրոյին, թե արդյոք կարո՞ղ ենք տեղում կախովի շարժիչ ճարել, իսկ նա ծիծաղել էր: Ոչ միայն կղզում, այլեւ ամենուր նման իրեր ձեռք բերելու համար պետք է ոչ միայն փող ծախսել, այլեւ՝ ժամանակ: Դա նշանակում է, որ պետք է մտնել ինտերնետ ու սկսել որոնումները: Եվ երբ որ պարզվի, թե քեզ անհրաժեշտ ապրանքը մի որեւէ երկրում կարելի է գնել, ապա այնտեղից դա պետք է ուղարկել մեկ ուրիշ երկիր: Իրականում այդ համակարգին մենք շատ էլ լավ ծանոթ ենք: Այդպես ենք ձեռք բերել դրոշ-առագաստը, նկարահանման սարքավորումը, շարժիչի պահեստային մասը եւ այլն: Ու սկսեցի գցել-բռնել. արբանյակային կապը չի աշխատում, նշանակում է՝ էլեկտրոնային փոստ չունենք: Հեռախոսով ոչ մեկին ոչ մի բան չես կարող կարգին բացատրել, ասենք, Ջասկի կղզուց հեռանալուց մեկ օր անց բջջային կապ եւս չենք ունենա: Գումարած, որ սիրտս ճմլվում է տղաների հետ պատահածից, ինչի մասին ես արդեն պատմել եմ նախորդ ռեպորտաժներում: Ինչպեսեւ այն մասին, թե ինչպես թռա Սիդնեյ: Կատարյալ մղձավանջ:

Եվ արդեն որոշ ժամանակ անց ես հասկացա, որ կյանքում ամեն ինչ կրկնվում է: Գլխումդ ծնվում են այն նույն, ցավի չափ ծանոթ մտքերը, որոնք մի տեսակ տխուր ժպիտ են առաջացնում: Այսինքն, տեսնո՞ւմ ես, որ կյանքում ոչ մի պատահական բան չի լինում: Այսինքն, բոլորովին էլ պատահաբար չէր, որ Սեմը, Հայկը, Բաբասն ու Մուշեղը միասին շրջվեցին «Փոքր Հայքով» (այդպես ենք անվանում մեր ռետինե նավակը), եւ ընդհանրապես ամեն ինչ այդ ժամանակ պատահաբար չեղավ: Հավանաբար մի ինչ-որ խթան էր հարկավոր, որպեսզի լուծեինք անիծյալ շարժիչի երիցս անիծյալ հարցը: Միաժամանակ լուծեինք եւ այլ հարցեր: Բայց թե ինչպիսիք էին լինելու այդ ուրիշ հարցերը, ես իմացա արդեն Սիդնեյում գտնվելուս առաջին օրը: Պարզվեց, որ այստեղ քառասունհազարանոց համայնքից համարյա ոչ ոք (բացառությունը հաստատում է կանոնը) չգիտի ոչ միայն «Արմենիա»-ի նավարկության, այլեւ շատ ուրիշ նորությունների մասին: Եվ չէ՞ որ Ավստրալիա պետություն-աշխարհամասը մեր ճանապարհին վերջին աշխարհագրական կանգառն է, որտեղ հայ համայնք կա: Իսրայելն ու Լիբանանը չեմ հաշվում, քանզի նրանք ողողվում են Միջերկրական ծովի ջրերով, որտեղ էլ օրենքով կավարտվի աշխարհաշուրջը: Իսկ հետո, Հնդկական օվկիանոսի ողջ արեւելյան եւ Խաղաղ օվկիանոսի արեւմտյան ափեզերքում եւ նաեւ բուն օվկիանիայում հայեր չկան: Նույնիսկ պատմական հուշարձաններով հարուստ Սինգապուրում եւ ահռելի Հնդկաստանում գործող հայկական համայնքներ գոյություն չունեն: Հենց դրա համար էլ ավստրալիական Մելբուռն եւ Սիդնեյ քաղաքներում «Արմենիա»-ի հետ հանդիպումը պետք է կազմակերպել ինչ-որ այլ, անսովոր ձեւով: Ես հանդիպեցի եկեղեցու, կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, եղա դպրոցում: Ամեն ինչի մասին պայմանավորվեցինք: Պատրաստվում եմ նույնն անել նաեւ Մելբուռնում: Այնտեղից Թասմանյան ծովի վրայով թռչելու եմ Նոր Զելանդիա, որտեղ մի որեւէ հայկական նավով կփորձեմ ընդառաջ գնալ «Արմենիա»-ին:

...Եվ հանկած հեռախոսազանգ է հնչում: Զանգում է մանավանդ Ղարաբաղում լավ հայտնի Հակոբ Աբոլակյանը եւ արագ, եթե չասենք՝ խուճապահար ասում. «Միացրե՛ք հեռուստացույցը»: Միացրեցի: Ամեն ինչ կարող էի պատկերացնել, միայն թե ոչ այն, ինչ տեսա: Ժամանակակից քաղաքի խորապատկերին, կատաղի ջրերի մեջ լողում են հարյուրավոր ավտոմեքենաներ, ամբողջ տներ, շինություններ, բեռնատարներ, նույնիսկ՝ ինքնաթիռներ: Ասես աշխարհի վերջն է: Ցունամի: Ճապոնիա: Օ՜, որքան ինձ ծանոթ են այդ «ցունամի» բառի իմաստն ու էությունը: Ի դեպ, այն ո՛չ հունական, ո՛չ էլ լատինական ծագում ունի: Ճապոներեն բառ է: Տասը տարի առաջ ես ապրում էի, ինչպես հաճախ էին ասում՝ ցունամիավտանգ գոտում: Մի քանի հոդվածներ եմ գրել Ուստ-Կամչատսկ ավանի ճակատագրի մասին, որը, հենց ցունամիավտանգ գոտում տեղադրված լինելու պատճառով, փոխադրեցին ծովից ու իր հին տեղից մի քանի կիլոմետր վերեւ: Երեսուն միլիոն ռուբլի ծախսեցին: Եվ զանգվածային բնակարանաշինությունից շատ չանցած խփեց հզոր, ինչպես Կամչատկայում էին ասում՝ հատակացնցումը, այսինքն ցունամին, որն ասես որոշել էր ստուգել Ուստ-Կամչատսկի քաղաքաշինարարների աշխատանքը: Ահռելի, բազմամիլիարդ տոննա ծանրությամբ ալիքները նետվեցին ափի վրա, բայց Ուստ-Կամչատսկի տներին չհասան: Իսկ հետ գլորվելիս իրենց ճանապարհին, հայտնի ասացվածքի կովի պես, բառացիորեն լիզեցին-սրբեցին ափը, իրենցից հետո ոչ մի հետք չթողնելով: Նույնիսկ նախկին ավանի նախկին շինությունների հիմքերն իրենց հետ տարան օվկիանոս: Սարսափելի տպավորություն էր: Ես ցունամիի մասին շատ բան, եթե չասենք՝ ամեն ինչ գիտեի: Սակայն ամենից ավելի տպավորված էի ալիքների արագությունից. ժամում 50-1000 կիլոմետր: Դա ավելի բարձր է տուրբոպտուտակային ինքնաթիռների արագությունից: Ոչ թե բուն ալիքների, այլ ջրային մակերեւույթի բարձրությունն արդեն ափին հասնում է մինչեւ հիսուն մետրի: Իր ողբերգական ցուցանիշներով առավել սարսափելի ցունամին դարձյալ Ճապոնիայի վրա է նետվել՝ 1933 թվականին: Այն ժամանակ դրա հետեւանքներն ու կենդանի, շոշափելի արձագանքը հասան համարյա թե մինչեւ Օվկիանիայի եւ Ավստրալիայի ափեր, ընթացքում հարվածելով մերթ Ասիայի, Օվկիանիայի ու Ավստրալիայի արեւելյան մասերի, մերթ Հյուսիսային ու Հարավային Ամերիկաների արեւմտյան ափերին: Հենց այդ փաստն էլ ինձ մահու չափ հուզեց եւ վախեցրեց առաջին վայրկյաններին, երբ իմացա Հոնսյուի՝ աշխարհում ամենախիտ բնակեցված կղզու ցունամիի մասին: Եվ արդեն ավելի ծանրացող վիճակի մասին իմացա, երբ հեռուստաէկրանից մեկ առ մեկ սկսեցին թվարկել աշխարհագրական անուններ, որոնք ըստ կանխատեսումների կարող էին հայտնվել ցունամիի տարածման ճանապարհին («տարածման երթուղի», «տարածման արագություն». այս բառերն են օգտագործում մասնագետները): Նշվում էին նաեւ Նոր Զելանդիան ու Ավստրալիան: Ա՜յ քեզ բան, հրեշավոր հոսանքի ամենակենտրոնում հանկարծ կարող է հայտնվել մեր փոքրիկ նավը: Հենց միայն այդ մտքից ներսս տակնուվրա եղավ:

Ամենասարսափելին այն է, որ հիմա ո՛չ «Արմենիա»-ն կապ ունի, ո՛չ էլ նրա հետ կա: Միայն թե ոչ ոք թող չկշտամբի մեզ, թե մեր մեղքով է կապի բացակայությունը, թե իբր՝ նման դեպքերի համար պետք է ունենալ կապի որոշ, պահուստային միջոցներ: Մենք ամեն ինչ ունենք: Այն ամենը, ինչ ունեն բոլոր նրանք, ովքեր այսօր ծով են դուրս գալիս եւ առավելեւս՝ շուրջերկրյա նավարկություն կատարում: Ամենակարեւորը, որ ունենք շատ թանկարժեք «Իրիդիում» արբանյակային կապը (րոպեն՝ յոթ եվրո): Բայց հիմա ամեն ինչ կապված է արբանյակների հետ, երկրի շուրջ նրանց պտույտների ուղեծրերի: Միայն թե, պարզվում է, այդ արբանյակները չեն սպասարկում օվկիանոսային լայնությունները, որոնք Սահարա անապատն են հիշեցնում: Մենք երթուղու այլ տարբերակ չունեինք: Մենք գիտեինք այդ մասին: Եվ ընդհանրապես, կապի մասին խոսակցությունն անօգուտ է այն դեպքում, եթե քեզ հանկարծ ցունամի է պատահում: Եվ սակայն շատ ավելի հանգիստ կլինեինք, եթե «Արմենիա»-ի հետ կապ լիներ: Ճիշտ է, ըստ հավանականությունների տեսության հնարավոր է, որ հարյուր կամ երկու հարյուր փորձով մեկ զանգ տեղ հասնի: Դա այն պահն է, որ համընկնում է մեր գոտում արբանյակի հայտնվելու պահին: Ես լավ գիտեմ, որ այս բացատրությունը պարզունակ է: Բայց մոտ է ճշմարտությանը: Եվ իմ զանգը տեղ հասավ: «Իրիդիում»-ի լսափողը վերցրեց Մուշեղը: Ես գոռացի.

-Մուշեղ ջան, ո՞վ կա կողքիդ:

-Արիկը:

-Տուր նրան լսափողը:

Ես Արիկին հասցրեցի ասել միայն «ցունամի» եւ «Ճապոնիա» բառերը: Թեեւ կարծում եմ, երկրորդը նա արդեն չլսեց: Հաջորդ երկու հարյուր փորձը ոչինչ չտվեց: Բայց զանգ զանգի հետեւից սկսեց ինձ գալ: Կինս, որդիս, դուստրերս, Երեւանի լեգենդար նախկին քաղաքապետ Մուրադ Մուրադյանը, Կարբիի դպրոցի տնօրենը, գյուղխորհրդի նախագահը, հայտնի սամբիստը, «Ամարաս» հրատարակչության շեֆը, կրթության եւ գիտության նախարարի խորհրդականը, «Լիտերատուրնայա գազետա»-ի աշխատակից Բոնչ-Բրուեւիչը եւ ուրիշներ: Թվարկում եմ միայն այն պատճառով, որ բոլորին գործի էի դրել: Խնդրել էի, որ նայեին Սի-Էն-Էն-ը: Ես հիշում եմ, թե այդ ալիքը ինչպիսի մանրամասնությամբ հեռարձակեց 1993 թվականին ռուսական պառլամենտի գնդակահարությունը եւ Նյու Յորքի սեպտեմբերի 11-ի մղձավանջները: Վստահ էի, որ անպայման քարտեզի վրա կցուցադրի ցունամիի տարածման ուղին: Իսկ դա շատ կարեւոր է: Իմանալ տարածման ուղղությունն ու արագությունը՝ արդեն շատ բան է նշանակում:



Մնում էր փորձել, որ անհրաժեշտ տեղեկատվությունը նավ փոխանցվի: Ես գիտեի, որ այն աննշան վայրկյաններն ու րոպեները, որոնք երբեմն թույլ են տալիս նավի հետ խոսել, բավական ճարպկորեն ու համառորեն օգտագործում է Արիկի կին Ռուզաննան: Նա նույնիսկ հասցնում է այդ հաշված վայրկյանների ընթացքում մի քանի տող տեղեկատվություն հաղորդել: Փնտրեցի, գտա Ռուզաննայի հեռախոսահամարը եւ զանգեցի: Կնոջ ձայն էր: Առանց դադար առնելու բացատրեցի, թե ինչ է հարկավոր անել: Մեկ-երկու րոպե անց զգում եմ, որ Ռուզաննայի արձագանքը ցավալիորեն համահունչ չէ: Այնպիսի տպավորություն է, թե նա ընդհանրապես ոչնչից տեղյակ չէ: Հարցնում եմ. «Ռուզաննա, դո՞ւ ես»: Նա զգում է, թե ինչպես եմ հուզվում: Պարզվում է, որ այդ Ռուզաննան այն դպրոցի տնօրենն է, որտեղ սովորում են իմ թոռները: Խեղճին շատ վախեցրի: Զանգեցի «իսկական» Ռուզաննային: Պարզվեց, նա անդադար հավաքում է արբանյակային հեռախոսի համարը: Սի-Էն-Էն-ի գաղափարն ընդունվեց: Ում որ զանգել էի, համենայն դեպս տվել էի նավի համարները: Զանգեցի տրանսպորտի եւ կապի նախարար Մանուկ Վարդանյանին: Նա Ռումինիայում էր: Զանգում եմ արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանին: Հեռախոսը չի պատասխանում:

Առավոտյան ժամը չորսին հեռուստաէկրանին սկսեցի որսալ աշխարհագրական նոր անվանում՝ «Կալիֆոռնիա»: Վազող տողում արդեն չկային Նոր Զելանդիան եւ Ավստրալիան: Ես հասկացա, որ բեկում է տեղի ունեցել ոչ միայն բուն ցունամիի աշխարհագրության, այլեւ իմ եւ բոլոր նրանց մեջ, ովքեր այդ պահերին անհանգստանում էին «Արմենիա»-ի համար:

Այն ժամանակ ես դեռ չգիտեի, որ որդիս՝ Հայկը համենայն դեպս կարողացել էր երկու անգամ խոսել «Արմենիա»-ի հետ: Մանրամասնորեն՝ նավապետի, որը հանգստացրել էր Հայկին, բացատրելով, որ ցունամին վտանգավոր է ափին եւ ոչ թե բաց օվկիանոսում: Իհարկե, Սամվելը մի փոքր խորամանկել էր: Ցունամին Գոլֆստրիմի նման սովորական օվկիանոսային հոսանք չէ, որը շատ հազարավոր կիլոմետրերի վրա «հաստատված» բնական ուղղություն եւ համարյա անփոփոխ արագություն ունի: Ցունամիի դեպքում ահռելի նշանակություն ունեն ոչ միայն ալիքների արագությունն ու ուժի եւ հզորության ցուցանիշները, հոսանքի ուղղությունը, այլեւ նրա ճանապարհին գտնվող ստորջրյա լեռնաշղթաները, որոնք օվկիանոսի մակերեւույթին հսկայածավալ ալեբախություններ են առաջացնում: Իսկ ընդհանուր առմամբ, իհարկե, ցունամին ողբերգություններ է ծնում հիմնականում ցամաքում, մանավանդ եթե նետվում է բնակավայրերի կամ քաղաքակրթական շինությունների վրա: Եվ, այնուամենայնիվ, ամենից լավ դուստրս՝ Սուսաննան ասաց հեռախոսով. «Երբ գործնականում անհնար է կիրառել «Հույսդ Աստծու վրա դիր, բայց ինքդ էլ պարապ մի նստիր» իմաստությունը, այնժամ Աստված ինքն է շտապում օգնության»: Այդպես էլ եղավ...

...Հիշելով Աստծուն, Սուսաննան ինձ հիշեցրեց իմ ճապոնացի բարեկամի մասին: Անցած դարի ութսունական թվականներին մենք ռուս գրող Վալենտին Ռասպուտինի եւ ճապոնացի փիլիսոփա Հիրոսի Նոմոյի հետ «Բայկալյան շարժում» բնապահպանական կազմակերպության համանախագահներն էինք: Այցելում էինք այն երկրներ, որտեղ քաղցրահամ լճեր կային: Հաճախակի հանդիպումները բարեկամացրին Նոմոյի հետ: Ես շատ եմ գրել այդ զարմանալի մարդու մասին, որը գտնում էր, որ Աստված մեկն է, իսկ մենք շատ ենք: Եվ երբ մարդն ազնվորեն աշխատում է, նա օգնում է Աստծուն: Սակայն որքան էլ երախտապարտ լինենք Աստծուն, այն գիտակցումը, թե մեզ մոտ ամեն ինչ ստացվեց, ամեն ինչ բարեհաջող անցավ, բոլորովին էլ չի հանգստացնում սիրտն ու հոգին: Ես հասկացա, որ հիմա արդեն օրեցօր ինձ ավելի դժվար կտրվեն պարտադիր ռեպորտաժներս: Ես շատ եմ գրել Ճապոնիայի, ճապոնական հրաշքի, այն մասին, որ ոչ մի գրամ մետաղ, ոչ մի կաթիլ նավթ չունեցող ժողովուրդը, որ մեծապես կախված է ներկրվող հումքից ու վառելիքից, աշխարհում առաջին տեղերից մեկն է գրավում նավաշինության, էլեկտրատեխնիկական եւ էլեկտրոնային արտադրության, պողպատաձուլման, մարդատար եւ բեռնատար ավտոմեքենաների արտադրության, էլեկտրաէներգիայի մշակման, նավթի վերամշակման, ցեմենտի, պլաստմասսայի, սինթետիկ մանրաթելի արտադրության գծով: Եվ այդ ամենը՝ ավերիչ ու կործանիչ պատերազմից հետո: Կասկած չկա, որ հիմա էլ այդ ժողովուրդը բավական սեղմ ժամկետներում կկարողանա վերականգնել իր կրած հրեշավոր կորուստները: Գլխավորը՝ ողբերգական իրավիճակից դուրս կգա կենսափորձով ավելի լայն ու խորապես իմաստնացած: Մեզ մնում է միայն ոչ թե նախանձել, այլ դասեր քաղել դրանից:

...«Բայկալյան շարժում» միջազգային բնապահպանական կազմակերպության ծրագրի շրջանակներում պատվիրակություններ են ժամանել Հայաստան շատ երկրներից, այդ թվում նաեւ Ճապոնիայից: Հանդիպումն իհարկե, տեղի է ունեցել Սեւանում: Հյուրերին տարել եմ եւ աղետի գոտի: Դա 1989 թվականին էր: Չափազանց թարմ էին Հայաստանի վերքերը: Սպիտակում Հիրոսի Նոմոյի ներկայությամբ ինչ-որ մեկը բարձրաձայն ասաց. «Աստվա՜ծ իմ, մի՞թե հնարավոր է այս ամենը վերականգնել»: Եվ ճապոնացի իմաստուն ծերունին մեղմ պատասխանեց. «Մինչ մենք գալիս էինք այստեղ, ես նայում էի համատարած քարերին: Ամենուր քարեր են: Իսկ քարե անապատների միջեւ ընկած են օազիսների գեղեցիկ հողակտորներ: Ես մտածեցի, որ հայերը աշխատասեր են: Մեզ մոտ, Ճապոնիայում հողը չափազանց քիչ է, գյուղացիները՝ չափազանց շատ: Եվ մենք նրանց ավանդաբար հարգում ենք: Նրանք օրինակ են ծառայում ողջ ժողովրդի համար, մեծից՝ փոքր: Եվ դա շատ կարեւոր է: Դեռեւս մեծ փիլիսոփաներն են ասել. «Չկա ավելի գեղեցիկ եւ դաստիարակող բան, քան լավ մշակված դաշտը»:

**Զորի ԲԱԼԱՅԱՆ**
**Խաղաղ օվկիանոս**

# ՀՀ հավաքականը սկսել է նախապատրաստությունը

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը ՀՖՖ տեխնիկական կենտրոնում երեկվանից սկսել է նախապատրաստությունը մարտի 26-ին Երեւանում կայանալիք Հայաստան-Ռուսաստան ընտրական մրցախաղին: Ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը հավաքի է հրավիրել 22 ֆուտբոլիստի:

Մեր ընտրանու դարպասը կրկին կպաշտպանի Ռոման Բերեզովսկին, որը չէր մասնակցել Վրաստանի ընտրանու հետ ընկերական մրցախաղին: Ռոմանն ընտրական նախորդ 4 հանդիպումներում պաշտպանել էր մեր հավաքականի դարպասը: 2-րդ դարպասապահն է Ստեփան Ղազարյանը: Իսկ ահա «Միկայի» դարպասապահ Գեւորգ Կասպարովը, որ մեկնարկում հուսալի խաղ է ցուցադրում, այս անգամ հավաքական չի հրավիրվել:



Մեծ թիվ են կազմում պաշտպանական գծի խաղացողները: Նրանց թվում են ինչպես փորձառու Սարգիս Հովսեփյանը, Ռոբերտ Արզումանյանը, Արարատ Առաքելյանը, Հրայր Մկոյանը, այնպես էլ հավաքականում դեռեւս իրենց տեղը չամրապնդած Արտակ Եդիգարյանը, Հովհաննես Համբարձումյանը, Արթուր Յուզբաշյանը եւ Լեւոն Հայրապետյանը: Վերջինս վրացիների հետ խաղում նշեց նորամուտը հավաքականում: Հայրապետյանն արդեն ամրապնդվել է Լեհաստանի «Լեխիայի» կազմում, ինչը չի կարելի ասել Ռոբերտ Արզումանյանի մասին, որն առայժմ չի նշել նորամուտը Լեհաստանի առաջնությունում «Յագելոնիայի» կազմում:

Երկարատեւ ընդմիջումից հետո հավաքական է հրավիրվել ուլիսցի Վալերի Ալեքսանյանը, որն ազգային թիմում 12 խաղ է անցկացրել: Վերջին անգամ նա ՀՀ հավաքականի մարզաշապիկը կրել է 2007-ի հունվարին Պանամայի հավաքականի հետ ընկերական խաղում:

Կիսապաշտպանական օղակի ֆուտբոլիստներից հավաքին մասնակցում են Արթուր Եդիգարյանը, Հենրիխ Մխիթարյանը, Էդգար Մալաքյանը, Կառլեն Մկրտչյանը, Արտակ Դաշյանն ու Լեւոն Փաչաջյանը: Վերջինս կրկին հրավիրվել է հավաքին որոշ ընդմիջումից հետո: Հավաքականում Փաչաջյանը վերջին անգամ հանդես է եկել Սլովակիայի ընտրանու դեմ՝ փոխարինվելով առաջին խաղակեսից հետո: Ինչ խոսք, Փաչաջյանը, Եդիգարյանը, որոնք խաղում են Իրանում, նաեւ Հենրիխ Մխիթարյանն իրենց ֆունկցիոնալ պատրաստությամբ պետք է ավելի լավ մարզավիճակում գտնվեն: Ուրախացնում է Հենրիխի արդյունավետ խաղը «Շախտյորում»: Ուկրաինայի առաջնության վերջին տուրում Մխիթարյանը գոլի հեղինակ դարձավ «Վոլինի» հետ խաղում:

Հարձակման գծում Վարդան Մինասյանը պետք է ընտրություն կատարի հետեւյալ ֆուտբոլիստներից՝ Գեւորգ Ղազարյան, Էդգար Մանուչարյան, Մարկոս Պիզելի, Յուրա Մովսիսյան, Ռոբերտ Զեբելյան: Մինսկի «Դինամո» տեղափոխված Զեբելյանը վերջին խաղը ՀՀ հավաքականում անցկացրել է 2008-ի հոկտեմբերի 15-ին Բոսնիայի ընտրանու դեմ: Առաջիկա խաղում շատ կարեւոր է, թե իրեն ինչպես կդրսեւորի Յուրա Մովսիսյանը: Նա առայժմ «Կրասնոդարում» փոխարինման է դուրս գալիս: Ճիշտ է, նույնիսկ նման իրավիճակում Յուրան իրեն լավ է դրսեւորում: Նա ՌԴ առաջնությունում արդեն բացել է գոլերի հաշիվը: Ինչ խոսք, այսօր մեր հավաքականի խաղում շատ բան պայմանավորված է Հենրիխ Մխիթարյանի եւ Յուրա Մովսիսյանի գործողություններով: Հուսանք, որ թե նրանք, թե նրանց խաղընկերներն իրենց լավագույնս կդրսեւորեն ռուսների հետ խաղում:

# «Շիրակը» ներկայացրեց նորեկներին ու պաշտոնական կայքը

**Երեկ «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցում տեղի ունեցավ «Շիրակի» նախագահ Արման Սահակյանի եւ «Գյումրի Գարեջուր» ՍՊԸ-ի նախագահ Միսակ Բալասանյանի հանդիպումը լրագրողների հետ, որի ընթացքում կայացավ ակումբի պաշտոնական կայքի եւ թիմի նոր ֆուտբոլիստների ներկայացումը:**



ՖՈՏՈԼՈՒՐ

**Արման Սահակյանը տեղեկացրեց, որ «Շիրակ» ակումբին հովանավորելու մեկամյա պայմանագիր է կնքվել «Գյումրի Գարեջուր» ՍՊԸ-ի հետ: Այդ ապրանքանիշը պատկերված է թիմի մարզաշապիկներին, հետագայում գովազդային վահանակներ կտեղադրվեն մարզադաշտում: Ակումբի նախագահը շնորհակալություն հայտնեց Միսակ Բալասանյանին թիմին նեցուկ լինելու համար: Վերջինս նշեց, որ «Շիրակը» Գյումրիի հարազատ թիմն է ու իրենք հպարտ են օգնության ձեռք մեկնելու Հայաստանի ամենատիտղոսակիր ակումբներից մեկին:**

**Խոսելով թիմի առջեւ դրված խնդիրների մասին, Արման Սահակյանը նշեց, որ գլխավորը Հայաստանի գավաթի նվաճումն է, ինչը թույլ կտա «Շիրակին» մասնակցելու եվրոգավաթների մրցաշարին: Իսկ առաջնությունում «Շիրակը» ձգտելու է մրցանակակիր դառնալ: Ակումբի նախագահը նաեւ տեղեկացրեց, որ «Շիրակը» համագործակցության պայմանագիր է կնքել Տոլյատիում գործող Յուրի Կոնոպլյովի անվան ֆուտբոլի ակադեմիայի հետ: Համագործակցությունը կներառի փորձի փոխանակում, մարզիչների, ֆուտբոլիստների հրավիրում, համատեղ հավաքների, սեմինարների եւ մրցաշարերի կազմակերպում: Նշենք, որ այդ ակադեմիան հովանավորում է «Ֆուտբոլի ազգային ակադեմիա» հիմնադրամի ղեկավար, ռուս հայտնի գործարար Ռոման Աբրամովիչը: Այդ ակադեմիայի հետ համագործակցում են մի շարք հանրահայտ թիմեր, որոնց թվում են Լոնդոնի «Չելսին», Մոսկվայի ԲԿՄԱ-ն, հոլանդական «Վիտեսը»:**

**Այնուհետեւ ներկայացվեց «Շիրակի» պաշտոնական կայքը: Այն առայժմ վերջնականապես ավարտված չէ, բայց արդեն զգալի տեղեկատվություն է պարունակում «Շիրակի» հարուստ կենսագրության մասին: Վերջում ներկայացվեցին «Շիրակի» նորեկները, որոնք ընթացիկ մրցաշրջանում մեծ թիվ են կազմում թիմում: Ի նշան երախտագիտության, Արման Սահակյանը 82 համարի մարզաշապիկը հանձնեց թիմի նոր հովանավոր Միսակ Բալասանյանին:**

# Հեյը մտադիր է դիմել Լյուիսի օգնությանը

**Գերծանրքաշային կարգում WBA-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Դեւիդ Հեյը, որն ամռանը պետք է մենամարտի Վլադիմիր Կլիչկոյի հետ, մտադիր է նախապատրաստական աշխատանքներում ներգրավել աշխարհի նախկին չեմպիոն, իր հայրենակից Լեննոքս Լյուիսին: Վերջինս մարզական կարիերան ավարտել էր 2003-ին՝ հաղթելով Վիտալի Կլիչկոյին:**

**«Եթե որեւէ մեկը գիտի, թե ինչպես հաղթել Կլիչկոյին, դա Լյուիսն է: Թեեւ Լեննոքսն արդեն ավարտում էր մարզական կարիերան, սակայն հաղթեց Կլիչկոյին: Լեննոքսը նաեւ ճանաչում է Վլադիմիր Կլիչկոյի մարզիչ Էմանուել Ստյուարտին, որը ժամանակին մարզել է իրեն», նշել է Հեյը:**

# Սամբիստները կվիճարկեն Սուպերգավաթը

**Մարտի 24-27-ը Մոսկվայում կանցկացվի սամբոյի աշխարհի Սուպերգավաթի խաղարկությունը, որը նվիրված է մարզաձեւի հիմնադիրներից մեկի՝ Անատոլի Խառլամպիեւի հիշատակին: Հայաստանի հավաքականի կազմում մրցապարտեզ դուրս կգան Աշոտ Դանիելյանը, Վաչիկ Վարդանյանը, Մարտին Միրզոյանն ու Արտակ Ծատինյանը:**



# Վահագն Հովսեփյանը Եվրոպայի գավաթակիր

**Անթալիայում անցկացված ձյուդոյի կադետների Եվրոպայի գավաթի խաղարկությունում Հայաստանը հանդես եկավ բավական ներկայացուցչական կազմով: Տասանի դուրս եկան 30 ձյուդոյիստներ, որոնցից 3-ն աղջիկներ էին: Մրցաշարին մասնակցեցին 13 երկրների ներկայացուցիչներ:**

**Գերազանց ելույթ ունեցավ 50 կգ քաշային Վահագն Հովսեփյանը, որը հաղթելով իր բոլոր մրցակիցներին՝ ռուսաստանցի Սերգեյ Ծատուրովին, վրացի Բեկա Նացատրալաշվիլուն, ադրբեջանցի Միշադի Գանսալիին, վրացի Միխեիլ Կիրիտաձեին, մտավ եզրափակիչ: Վճռորոշ գոտեմարտում նրա մրցակիցն ադրբեջանցի Սադիկ Մահարամովն էր: Այստեղ էլ հայ ձյուդոյիստն իրեն գերազանց դրսեւորեց ու հաղթելով մրցակցին, նվաճեց Եվրոպայի գավաթակրի տիտղոսը:**

**Աղջիկներից լավագույն արդյունքը ցույց տվեց Քնարիկ Ստամբոլցյանը, որը 40 կգ քաշայինների մրցավեճում զբաղեցրեց 5-րդ հորիզոնականը:**

# Արոնյանի առաջատարի դիրքն անսասան է

Մեկօրյա հանգստից հետո Մոնտե Կառլոյի շախմատի մրցաշարի մասնակիցները կրկին նստեցին խաղասեղանների շուրջ՝ անցկացնելով 9-րդ տուրի հանդիպումները: Լեւոն Արոնյանի մրցակիցը մրցաշարում անհաջող հանդես եկող Վլադիմիր Կրամնիկն էր: Կույր շախմատի պարտիայում սպիտակներով խաղացող Արոնյանը մատի սպառնալիքի տակ ստիպեց մրցակցին 37-րդ քայլին հանձնվել: Արագ շախմատի պարտիան 42-րդ քայլին ավարտվեց ոչ-ոքի: 9 տուրից հետո Արոնյանը 13 միավորով շարունակում է միանձնյա գլխավորել աղյուսակը:

Առաջատարին հետապնդող Մագնուս Կառլսենը Վիշվանաթան Անանդի հետ մրցավեճում մեկ միավոր վաստակեց: Նա սկզբում պարտվեց «կույր» շախմատում, ապա հաղթեց արագ շախմատի պարտիայում: Կառլսենը վաստակել է 12 միավոր:

«Կույր» շախմատի մրցախաղում Հաշիմովը հաղթեց Գելֆանդին, Նակամուրան առավելության հասավ Թոփալովի նկատմամբ: Գիրի-Գրիշչուկ, Իվանչուկ-Կարյակին պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի:

Մրցաշարի ավարտին մնացել է 2 տուր: Այսօր Լեւոն Արոնյանը կմրցի Վեսելին Թոփալովի հետ, իսկ ավարտական տուրում նրա մրցակիցը կլինի Սերգեյ Կարյակինը: Կառլսենը կհանդիպի Ալեքսանդր Գրիշչուկի և Բորիս Գելֆանդի հետ:

# Առաջատարները հաշտություն կնքեցին

**Տաշքենդում ընթացող շախմատի մրցաշարի 4-րդ տուրում ուշադրության կենտրոնում երկու առաջատարների՝ Տիգրան Պետրոսյանի եւ Եվգենի Ալեքսեեւի մրցավեճն էր, որոնք 3-ական հաղթանակ էին տոնել: Առաջատարները հաշտություն կնքեցին: Դա հնարավորություն ընձեռեց եւս 8 շախմատիստների վաստակել 3,5 միավոր եւ Պետրոսյանի ու Ալեքսեեւի հետ գլխավորել աղյուսակը: 5-րդ տուրում Պետրոսյանը սեւերով կխաղա Միխայիլ Ռոյզի հետ:**

# Հայաստանը ներկայացված է 9 շախմատիստով

**Ֆրանսիայի Էքս լը Բեն քաղաքում մեկնարկում է շախմատի Եվրոպայի տղամարդկանց անհատական առաջնությունը, որը կանցկացվի շվեյցարական մրցակարգով, 11 տուրով: Մրցանակային ընդհանուր հիմնադրամը 120 հազար եվրո է: Հաղթողը կպարգեւատրվի 20 հազար եվրոյով, 2-րդ եւ 3-րդ մրցանակակիրները՝ համապատասխանաբար 15 եւ 11 հազար եվրոյով: Ընդհանուր առմամբ դրամական պարգեւների կարժանանան լավագույն արդյունքի հասած 25 շախմատիստները:**

**Հայաստանը Եվրոպայի առաջնությունում կներկայացնեն 9 շախմատիստներ: Ամենաբարձր անհատական վարկանիշն (2676) ունի Գաբրիել Սարգսյանը, որն այդ ցուցանիշով մասնակիցների մեջ 22-րդն է: Նրան հաջորդում է Վլադիմիր Հակոբյանը (2675): Պարգեւների համար կպայքարեն նաեւ Զավեն Անդրեասյանը (2645), Արման Փաշիկյանը (2642), Ավետիք Գրիգորյանը (2608), Հրանտ Մելքումյանը (2593), Սամվել Տեր-Սահակյանը (2575), Ռոբերտ Հովհաննիսյանը (2560) եւ Վլադիմիր Պողոսյանը (2222):**

**Մասնակիցներից 9 շախմատիստներ 2700-ից բարձր վարկանիշ ունեն: Ցուցակը գլխավորում է ռուսաստանցի Պյոտր Սվիդլերը (2730), որին հաջորդում են Յան Նեպոմնյաշչին (2729), Դավիթ Նավարան (2722) եւ Նիկիտա Վիտյուգովը (2720):**

# Ռինգ դուրս կգան 4 բռնցքամարտիկներ

Չեխիայի Ուստի Նադ Լաբեմ քաղաքում կայանալիք բռնցքամարտի միջազգային մրցաշարում Հայաստանը կներկայացնեն 4 բռնցքամարտիկներ: Ռինգ դուրս կգան Պեկինի օլիմպիադայի բրոնզե մեդալակիր Հրաչյա Ջավախյանը (64 կգ), Արամ Ավագյանը (56 կգ), Արա Պլուզյանը (60 կգ) եւ Տիգրան Արմենակյանը (75 կգ):

Մրցաշարին պետք է մասնակցեին նաեւ Ռաֆիկ Խաչատրյանը (69 կգ) եւ Հայկ Խաչատրյանը (75 կգ), սակայն վիզաների ձեւակերպման հետ կապված խնդիրների պատճառով Չեխիա չմեկնեցին:

# Մահացել է Նիկոլայ Անդրիանովը

59 տարեկանում վախճանվել է հանրաճանաչ մարզիկ Նիկոլայ Անդրիանովը: Նա 7 անգամ դարձել էր սպորտային մարմնամարզության օլիմպիական չեմպիոն: Համաշխարհային սպորտի պատմության մեջ Անդրիանովը միակ մարմնամարզիկն էր, որ օլիմպիական խաղերում 15 մեդալ էր նվաճել: Նա նաեւ աշխարհի ու Եվրոպայի բազմակի չեմպիոն էր:

1980-ականներին Անդրիանովը մարզում էր ԽՍՀՄ երիտասարդական հավաքականը: Մոսկվայի օլիմպիադայում հենց Անդրիանովին էր տրվել մարզիկների անունից երդման խոսքեր արտասանելու պատիվը:



Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

